

ՊՐՕՖ. Ն. ՄԱՐՐ. Ա. արտ. անդամ Հ. Ազգ. Ընկ.
Пр. Н. Я. Марръ. I почетный членъ Арм. Этно. Общ.
Prof. N. Marr. I M. honor. de la Soc. Ethn. arm.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊԸ

Մ. ԱՐԵՂԵԱՆԻ

Պաշտպանութեան համար մեր հերոսներն ունին վահան, հագնուած են շապիկ զրահէղէն կամ շապիկ զրեխին և զլուխներն ունին թագը զրեխին: Ապա մարտի գոչի համար ունին փող պղնձի:

Այս բոլոր զէնք ու զրահները, պատմութեան մեծ մասով, ժառանգարար անցնում են որդէցորդի: Նոյնպէս ժառանգական են և զեւտերը, այսինքն զգետները, որոնց մէջ մտնում են երբեմն և զէնքերը: Այստեղ մենք կը թուենք միայն այն դանազան անունները, որ պատմութեան մէջ կան. 1) զլիու գօտին, գօտին ի զլին, գիւտին ի զլին, ոսկի գիւտին, կութ, ֆաս, խօզէն ի զլին, խուզէն անդարին քող, որոնք շփոթւում են երբեմն զրեխի թագի հետ, որ է սաղաւարտը: 2) Կաղըֆի կապան, կապէն խաբուկին, կապէն աթմանին, կապէն կաղըֆին, ֆուքէն ի թաթարին, կապէն աթըբին (աթերին), քիւրքիկ զարըթին (զապութին), զաւուխ զաղիֆին (զլիի հագուստ?), արխալուդ, բանաւարի: 3) քամարն ի մէջքին, ոսկի քամար, քամարն ի ոսկին, մէջկապ, մէջկապն ի քեալաբանդին, 4) ջզմէն եզան կաշին. պողվատէ նալը տակին, կոնդրէք, ջզմէն ի ֆանարին, ճզմէն Արզըրմին, ճզմէն Մհերին (7-րդ, 8, 16, 20, 26, 45, 42, 48, 55, 57, 61, 64, 3-րդ, 25, 90, 64, 42, 104, 107, 125, 9-րդ, 381 հտ., 394, 399, 428 հտ. 8-րդ, 32 հտ.):

Այս են զիւցազնի բոլոր զէնք ու զրահները և հագուստը. մէկը ոչ մի բան պակաս չի թողել իւր հերոսին վառելու ու զինելու համար: Սակայն փահլեանն պիտի ունենայ և մի ուրիշ բան, համայիլը:

Համայիլ սուրբ խաչ — Մեր ժողովրդի հասկացողութեամբ փահլեանն առանց հմայիլի փահլեան չի: Հմայիլը նրան ոյժ է տալիս և փորձանքից ու չար աչքից ազատ պահում: Դա ևս կայ մեր գիւցազների շարքի մէջ, որ է խաչ պատրագին

վեր աջ թևին», կամ «Համայնի սուրբ խաչ, Մարութայ բանձրածիգ սուրբ Աստուարածին» (6-րդ, 25 հտն.): Դաւիթը իւր ծոցում պահում է համայնի և սանդղի: Սանդղը սուտ երգման համար է, և մի երկու պատմութեան մէջ է միայն երևան գալիս: Իսկ համայնի վրայ տուած երգումն անպատճառ պէտք է պահէր, թէ չէ կը պատժուէր (3-րդ, 50 հտ. 9-րդ, 392): Մի պատմութեան քով այս ծոցի համայնիը նոյնանում է խաչ պատարագի հետ (3-րդ, 51): Ուրիշ պատմութեանքով (1-ն, 159, 177, 3-րդ, 35 հտն. 46) նոյն համայնիը կոչւում է սուրբ Նշան, այսինքն սուրբ խաչ, որի զօրութիւնով Դաւիթն անփնաս է ֆուռ: Այս սուրբ Նշանը յետոյ Մհերն է դնում ծոցը (3-րդ, 37 հտ. 53, 56): Մի քանի պատմութեանքով Դաւիթն իւր աջ թևին Մսէ խաչ ունի իբրեւ նշան, որով նրա դիակը պիտի ջոկուէր ուրիշներիցը: Բայց դա միաժամանակ և համայնիի դերն է կատարում: Զէնով Յովանն ասում է Դաւիթն. «Յիշմ Մարութայ բանձր Աստուածածին. Մսէ խաչ որ պատարագ աջ թևին»: Դաւիթը որ համայնի վրայ երգւում է և երգումը չի պահում, «աչքեց վեր իւր թևին, տեսաւ Մսէ խաչ սեցիր ի» (1-ն, 173, 9-րդ, 388, 390 հտն. 3-րդ, 134): Աջ թևի նոյն «Մսէ խաչ որ պատրաստի» կոչւում է և խաչ պատարագստի. «Մարութիկ Աստուածածին, խաչ պատրաստի վեր աջ թևին» (9-րդ, 435). «Դաւիթ յիշաց զՄարութայ բանձր Աստուարածին, խաչ պատրաստին յիւր աջ թևին» (8-րդ, 36): Նոյն 9-րդ եր. 437 խաչ պատրաստին կոչւում է և խաչ պատարագին: Այս վերջին ձևով գտնում ենք և ուրիշ պատմութեանքի մէջ. «Յիշմ իմ հացն ու գինին, Տէր կենդանին. Մարութայ բանձր Աստուարածին, խաչ պատրագին վեր իմ աջ թևին» (2-րդ, 3-րդ, 124 հտն. 7-րդ, 20 հտն.): 3-րդ, եր. 124 խաչ պատրագին և Մսէ խաչ նոյնանում են. իսկ 7-րդ եր. 34, 36, խաչ պատրագին կոչւում է և խաչ պատարագին, որ է (3-րդ, 39) խաչ պատարագին:

Բերած օրինակներից երևում է որ համայնի, Ս. Նշան, Մսէ խաչ, Մսէ խաչ որ պատրաստի, խաչ պատրաստի, խաչ պատ(ա)րագին, խաչ պատ(ա)րագին,—բոլոր նոյն բանն են և անխտիր իրար տեղ րոնում են: Միայն երկու պատմութեան մէջ դրանք չեն նոյնանում, բայց պարզ երևում է որ նոյն բանի կրկնութեան: Այսպէս 8-րդ, 36 ծանօթութեան մէջ ասած է. «Մարութ որ կեղնի. մսէ խաչ կար էնու (Դաւիթ) աջ թևի վրէն, մէկ էլ խաչ պատրաստին, որ յիւր վանքի խաչը, կապուկ էր թևին»: Բայց նոյն պատմութեան մէջ եր. 41. Դաւիթն ասում է. «Դմ աջ թևի վրէն մսէ խաչ կայ, խաչ պատրաստին էլ կապուկ է իմ թևի վրէն»:

Մի պատմուածքի մէջ ևս (1-ն), Մսէ խաչը թևին է, իսկ ս. Նշանը ծոցին:

Այս Համայնի ա. խաչը ժառանգական է և, ինչպէս վերևում գրինք, Սանասարը սարքի միւս մասերի հետ ստանում է ծովի տակին եղած եկեղեցուց կամ վանքից, ուր և յղանում է մայրը: Նրան էլ այս խաչը զօրութիւն է տալիս. «կանչեց... խաչն ի պատրազին վեր Սանասարի աջ թևին» (3-րդ, 78): Դաւթի հօր մահից յետոյ այս խաչը պահուում է կամ Օլուջանց տանը կամ Մարութայ ս. Աստուածածնի վանքում:

«Համայնի սուրբ խաչ, կամ Խաչ պատարագին»,—մէկը հեթանոսական, միւսը քրիստոնէական անուն է, որ միացրել է ժողովուրդը: Քրիստոնէականի մասին մենք յետոյ կը գրենք, այստեղ այն միայն ասենք, որ քրիստոնէական անունն հետ միացած համայնիւր մի հեթանոսական հաւատալիք է, որով դիւցազնը վստահ է իրեն հովանաւորող զօրութեան վրայ, և այդ վստահութիւնը նրան կրկին ոյժ է տալիս: Այսպիսի համայնի խաչ կայ ի միջի այլոց և ռուսաց վէպի մէջ. Իլիա Մուրոմեցն ունի Оберечь чуждый крестъ, որ նրան պահուում է հարուածներէից. Իլիայի աջ թևի վրայ գրուած է թէ նա կուռի մէջ չպիտի մեռնի: Նոյնպիսի խորհրդաւոր գրեր (Runen) է կրում իւր թևին Էդգայի մէջ Զիգուրդը, որ միանգամայն ունի և մի թալիսման, յողթութիւն շնորհող մի քար, որը Տիտլէյֆի հետ կուռելիս մոռանում է, ուստի և ոյժը պակասում է: Այս թալիսմանի ընաւորութիւնն ունի մեր վէպի մէջ Խաչ պատրաստին կամ Խաչ պատարագին (ս. Նշան, Խաչ պատարագին), որ նրա համայնին է, այսինքն հմայքը. իսկ Զիգուրդի թևին եղած գրերին—«ուռն է՛ն եր ի՛ն, համապատասխան է Դաւթի թևի մէջ խաչը, մարմնի վրայ դրոշմուած խաչը: Դրանք երկուսն էլ նոյն հմայքն են, միայն, ինչպէս ասացինք, կրկնուած ձևով: Այդ հմայքը մահից չէ ազատում հերոսին, բայց շատ նախնական ազգերի յատուկ անահաւատքով անխոցելի է դարձնում նրան, ինչպէս են Դաւիթ, Զիգֆրիդ և ուրիշները: Դաւիթն ամեն անգամ որ մոռանում է յիշել իւր համայնիւր, փնասում է, բռնւում և այլն. իսկ երբ համայնիւր վրայ երդուելուց յետոյ՝ երգումը չի պահում՝ երգումակոտոր է լինում, խաչը սևանում է թևին, կամ որ նոյն է՝ մէջքը կամ թիկունքը սևանում է մի երակ. որտեղից և խոցելի է դառնում ու հարուած ստանալով սպանւում, ինչպէս և Զիգֆրիդ և ուրիշները: Եւ եթէ համեմատութիւնն աւելի հեռուն տանենք, թերևս Զիգֆրիդի՝ վիշապի արեան մէջ լողանալու և բացի թիկունքից, անխոցելի դառնալու մի պատմութիւն է և Դաւթի լողանալը՝ մատղած երկնջների արեան մէջ այն ժա-

մանակ, երբ Մարութայ վանքից ստանում է իւր Համայնի սուրբ Նշանը, (1-ն, 159) դրանք բոլորը, ինչպէս և ուրիշ շատ զծեր, նախնական վիպական եղանակներ են, ուստի և զարմանալի չէ, որ մեր վէպի մէջ գտնենք, դիւցազնական առասպելների հետ, և դրանց յիշողութիւններ, թէպէտ և մասամբ միմայցած և անհասկանալի դարձած: Դրանց կարգին պատկանում է և Աթլլէսի անխոցելի դառնալը՝ բացի զարշապարից:

Սանասարի առասպելը.—Սանասարն իւր բոլոր յատկութիւններով հանդիսանում է իբրև կայծակի կամ ամպրոպային հերոս: Նա և իւր երկուորեակ եղբայրը ծովածին կամ ծովային են, ինչպէս շատ դիւցաբանութիւնների մէջ կայծակի կամ ամպրոպի աստուածները կամ դիւցազները: Նրանց մայրը ջրից հիշտ այնպէս է յղանում, ինչպէս գերման զրոյցների մէջ այն երկուորեակ եղբայրները, որոնց համեմատում են հնդկական Ապտիա (Յրածին, Յրերի որդի) Ինդրային, որի երկուորեակ եղբայրն է Ագնին, որ իբրև կայծակն կրակի աստուած Ապամ Նապատ, Յրերի զաւակ է կոչւում (W. Mannhardt, German. Mythen, 216 հտն.): Սանասարը ծովային լինելով հանդերձ՝ հրեղէն մարդ է (8-րդ, եր. 12): Արդ հրեղէն ծնունդ ծովից, դա միայն կայծակի աստուածը կամ հերոսն է, որ ծնւում է սակայն ոչ երկրաւոր ծովից, այլ երկնային ամպերի ծովից, ինչպէս Ինդրան, Ագնին և ուրիշները, ինչպէս և մեր Վահագն (Մ. Արեղ. Հայ Ժող. Առասպելներ. եր. 134 հտն.): Արդարև մեր վէպի մէջ երկնային ծով չէ յիշոււմ, որից յղանում է Սանասարը, այլ միայն ընդհանրապէս ծով, հաւանօրէն երկրի վրայ և Սասունի սահմաններին մօտիկ մի ծով. բայց եթէ երկրի վրայ տեղափակուած մի որոշ ծով էլ լինէր, զարմանալի չէր լինիլ, որովհետև մի շատ սովորական երևոյթ է, որ դիւցաբանութեան երկնային տեսարանները դիւցազնական վէպի մէջ տեղափոխւում են երկրի վրայ մի որոշ տեղ:

Սանասարի ձին, Գուռկիկ Զալալին, իսկապէս միեւնոյն երևոյթի տարբեր անձնաւորումն է: Նա ևս ծովային հրեղէն է, նոյն ծովից, որից Սանասարը. թռչում է ամպերն, արեղակ. քամի է ու քամու պէս սլանում իբրև փոթորիկ, շնչով կտորում և այլն: Մի խօսքով ամպրոպ ու կայծակի անձնաւորումն իբրև ձի, որ ունին ամպրոպային աստուածները կամ հերոսները, ինչպէս Ինդրան:

Կայծակի մի ուրիշ պատկերացումն է իբրև զէնք՝ կայծակի թուրը, որ ունի, ինչպէս տեսանք, կայծակի յատկութիւններ. և իբրև կայծակ ծագում է նոյնպէս երկնային ծովից: Այս զէնքը բանեցնում են առասպելաբանութեան մէջ ամպրոպային աստուած-

ներն ու դիւցազնները Սրանց յատկութիւնն է և ծովի մէջ մտնելն ու այնտեղ կաթնաղբիւրի ջուր խմելը, շատ ուտելն ու խմելը, որից զօրանում են, ինչպէս մեր Սանասարը:

Սանասարն ունենալով ամպրոպային հերոսի ծնունդ և յատկութիւններ՝ կատարում է և մի գործ, որ դարձեալ ամպրոպային աստուծու կամ հերոսի առասպելն է, միայն փոքր ինչ մթնացած և հետը միացած ուրիշ ընդհանուր վիպական գծեր: Դա ամպրոպային կոխն է (տես մեր Volksglaube եր. 77 հտն. և Հայ ժող. Առասպելներ. եր. 151 հտն.): Այդ կոխն ունի բազմազան պատմութեան, որոնց բոլորի էութիւնը հետեւեալն է.

Վիշապը, որ ամպրոպի չար անձնաւորութիւնն է, իւր ընկեր չար ոգիների հետ կտրում է արեգական լուսոյ երեսը, յափշտակել է ուղում կամ յափշտակում է արեգակը, որ իբրև աղջիկ է պատկերանում կամ իբրև թանգագին ակ. կտրում է նաև երկնային ծովի կամ անձրևարեք ամպերի առաջը և չի թողնում անձրև գալ: Ամպրոպային աստուածը կամ հերոսը, որ նոյն երևոյթի բարի անձնաւորութիւնն է, կայծակներով և հողմերով կուռն է վիշապի և նրա ընկերների դէմ, ազատում է արեգակն, որ իւր կինն է կամ քոյրը, և անձրև բերում:

Այս առասպելը, որի էութիւնը միայն բերինք, յատուկ է շատ ազգերի և մինչև այժմ կենդանի մնում է մեր ժողովրդական զրոյցների և հաւատալիքների մէջ: Այս միևնոյն առասպելը գտնում ենք պատմութեան Սանասարի կամ իւր եղբոր վրայ. միայն, ինչպէս ասացինք, խառնուած ուրիշ վիպական գծերի հետ: Տեսնենք առասպելը, հետը միասին մի քանի գծեր:

Պղնձէ քաղաքի շուրջը պղնձէ պարիսպ է քաշած և դուռ չկայ (3-րդ, 73, ձեռ. Մովսէս. Բ.): Թագաւորն ունի մի աղջիկ, Քառասուն-ձիւղ-Մամ անունով (9-րդ, 403, 410, 8-րդ, 10, որի մէջ Չինմաչայ թագաւորի աղջիկն է): Նա պատկանում է ժողովրդական վէպի ի մաս տ ու ն, կ ա Ր դ ա Յ ու Ր կ ա ն անց տիպին, որոնք քաղութեան մէջ յետ են մնում ոչ միայն դիւցազններից, այլ և շատ դիւցազնութիւններից. բայց ունին ամեն գիտութեան շնորհք. գիտեն նախատեսել, գուշակել և գաղտնիք իմանալ. օժտուած են յաճախ և կախարդութեան շնորհքով և կարող են մի խօսք ասելով կերպարանափոխել ուրիշներին, քար դարձնել կայն:

Մեր ժողովրդական վէպի բոլոր նշանաւոր կանայքն ունին փոքր չափով այս կանանց յատկութիւններից, իմաստուն և կարողացուոր է, օրինակ, Մովսէյ Պանոսմը, որ ասում է ինչպէս գըրբաց. «ես մեր զրբերին աչքեր եմ. մեր զրբեր կ'ասենք...: Նա զրբերով իմանում է բռնած գործի չարն ու բարին: Գոհար Պա-

թունը, Մհերի կինը, «աստղապաշտ» է, աստղերին նայելով գուշակում է հերոսների վիճակը: Դիւցազնուհի Սանդուխ Սաթուհն է, որ բոլորովին ուրիշ տիպի կանանց է պատկանում՝ նրանց որ տղամարդի պէս զինւում են, իբրեւ տղամարդ հագնուած շրջում ձիով, ուժեղ են և կուռում են կայլն, այս Սանդուխն էս մաստուն, կարգացուոր» է. գրքով իմանում է դադանիքը և յայտնում թէ ով է Դաւթի հետ կռուող անծանօթը: Իսկ Պղնձէ քաղաքի թագաւորի աղջիկն ամենից շատ ունի այս տիպի կանանց յատկութիւններ:

Քառասուն-ձիւղ-Մամը իմաստութեան հետ և կախարդութեան շնորհք ունի. նա մի հաւք (թռչուն) ունի, որ կանգնում է քաղաքի պատի վրայ ճւղում է, երիտասարդները ծերանում են: Այսպէս քառասուն «կանաչ կտրին ջահիլ տղայ» նրա ձայնից հալեւորել են, մօրուաներն եկել դեղին դարձել և այստեղ պարսպի տակ մնացել են: Սակայն երբ Սանասարը կամ իւր եղբայրն առնում են նրան, ստիպում են աղջկան կախարդութիւնից ազատել տղաներին. «Աղջիկը սիրբանդութիւն արաւ, կանչեց իւր հաւքին բերեց, Հաւքն ինչ կանչեց, ինչ ժամանակ եկած էին ջահիլութ, էլի էն հասակին դարձան» (3-րդ, 72, 78): Ձեռ. Մովսէս Բ. պատմութեի մէջ աղջիկն ինքը խալիսի վրայ «սէհր ի թալիս». Սանասարը քողն աղջկայ երեսից առնում է, տեսնում են և սսէհրը բաղում է: Կախարդութիւնն ուրեմն աղջիկն անձամբ է անում: Մի պատմութեով (8-րդ, 12) նա շատ թագաւորի տղաների, որ նրան ուզելու էին եկած, կախարդել ձգել է սօրերը. մէկին աղուէս է դարձրել, որ այս սարից այն սարի վրայ է թռչում. միւսին այնպէս է կախարդում, որ եօթը ջրաղացի ջուրը խմում է և ասում թէ ծարաւ է. մի երրորդը եօթը փուռ հաց ուտում և դարձեալ քաղցած մնում կայլն,—բոլորը ընդհանուր հեքաթային դժեր:

Քառասուն-ձիւղ-Մամը մի կուժ լիքը ջուր է լցնում, խնձորը բերանին դնում, մի կուժ էլ դատարկ խնձորը բերանին դնում, թուղթ է գրում Սանասարին (կամ Բաղդասարին) թէ «ես Պղնձէ քաղաքի թագաւորի աղջիկն եմ. իմ սիրտը քան այս դատարկ կուժը սար-սուրբ է, իմ գլուխը քան այս լիքը կուժը լիքն է: Աստուծու շնորհքով լցուած եմ: Քառասուն տեղից քառասուն մարդ են եկած ինձ ուզելու, ես խօսք չեմ տուել: Արի ինձ առ. ինձի շատ դիւր կուգաս դու» (3-րդ, 69): Նամակը տալիս է երկու քոյրերի, որոնք բերում Սանասարի երդից ներս են ձգում:

Մի պատմութեով (ձեռ. Մովսէս Բ.) այս բաները քոյրերին փոխանակում է հաւքը. «գիր ըմ գրեց, էտու գիր խաւք,—էնու խաւք կէր, սրբանդ էր,—տմբ թալ Սանասարի յերդիս վէ»:

Ուրիշ պատմութեամբով բաների հաւքին ևս փոխանակում է քա-
մին. «գիր գրեց, ետու քամուն, ասաց. Քամին, նա թուղթ
կը տանես, կը տաս իմ տէքը Բաղդասարին, գայ ձի տանի Սա-
նասարին»: Քամին զթուղթ երի ետու Բաղդասարի ձեռն (8-րդ,
10): Քամին իբրեւ բաների դուրս է գալիս վէպի մէջ ուրիշ դէպ-
քում ևս. Սանասարի քեռին լսելով իւր քեռորդու համբաւը՝ «ե-
լաւ թուղթ գրեց, ետու քամուն, ասաց. իմ թուղթ կը տանիս իմ
խարջայ (քեռորդի) Սանասարի ձեռն կը տաս: Քամին թուղթ ե-
րեք, յակնատից եթալ Սանասարի ձեռն (8-րդ, 8): Անշուշտ նոյն
դերն է կատարում քամին, երբ Դաւթի և Մհերի կռուի ժամա-
նակ՝ Դաւթի մանգիրն առնում տանում ձգում է Պանդուկ Պաթնի
տան առջև նրան իմաց տալու թէ Դաւիթն եկել է (3-րդ, 133):
Նոյն դերը կատարում են յաճախ աշուղները. մեր վէպի մէջ Պան-
դուկն աշուղների ձեռով է իւր համբաւն ուղարկում Դաւթին:

Աշուղներին, քամու և հաւքի բաներեութիւնը, որ շատ հին
վիպական դիմ է, բնականաբար նրանց տեղափոխութեան յատ-
կութիւնից է ծագած, և քամու ու թռչնի արագութիւնից: Մինչև
այժմ ևս մեր հաւատալիքի մէջ յատկապէս կաշաղակը կամ աղ-
ռաւը համարում է բաների. երբ ծառի վրայ նստած խօսում է.
«Պաշաղակ, խէր ես, դնա մին էլեկն ևայլն: Յայտնի է, ս. Սարգսի
տօնին կաշաղակներով կամ աղռաւներով դուշակում են ապագայ
նշանածի տեղը: Իմաստուն թռչունները շատ ազգերի վէպերի
մէջ դուրս են գալիս. և նոյն իսկ մարգուհետ խօսելով յայտնում
են գաղտնիքներ, խորհուրդ տալիս, դուշակութիւն անում. յաճախ
և լուր տանում մէկից միւսին: Այսպիսի թռչուններից են սովո-
րաբար աղանի, կարապ և ագռաւ. առաջին երկուսը երբեմն կեր-
պարանափոխ լինելով դառնում են աղջիկ: Նրանց դերը յաճախ
կատարում են և մարդիկ, հրեշտակներ ևայլն: Այս թռչունների
կարգին է պատկանում անշուշտ և Պղնձէ քաղաքի թագաւորի
աղջկան «սրբանոգ հաւքը», որին փոխանակում են և ինքը թագա-
ւորի աղջիկը, և բաների քոյրեր:

Սանասարն որ նամակը ստանում է՝ հեծնում է հրեղէնը և
քամու հետ հանում Պղնձէ քաղաքին. որովհետեւ դուռ չկար, «իւր
ձիու սանձն ոլորեց, ձիու մէյդան բաց արաւ, դարձաւ կանչեց
իւր աստուած, ասպանդակ մի զարկեց ձիուն, մէկէն թաւ ընկաւ
Պղնձէ բաղան քաղաքի մէջ»: Այստեղ նա իջևանում է մի հայի
խանում, մի հալիւորի մօտ. կամ հիւր է դնում մի պառաւ տուն.
(9-րդ, 408 ձեռ. Մովսէս Բ.): Հալիւորը ցոյց է տալիս Աղջկայ պա-
լատը. «ես փանջարէք, ս և ա մ ա ր ա թ ն ե ր, ս և յերդիսներ: Էնի
(թագաւորը) ս և փարդայ ի կապած յերդիկներուն, որ աղջիկ դուռ

չտեսնայա՝ Բայց տանիքի վրայ ոսկի խնձորը ճրագի պէս վառվում է: Եւ Հալեորն աւելացնում է. «Գեորգը ըմ կայ էնու յերդիսներու տակ. ինչ դուաթով էլնի, էն գեորգ վերուցի, զարկէ էն ոսկի խնձոր բերի տակ, դնի իւր ծոց. թագաւորի հետ կռիւ անի, կտրիճ ըլնի, աղջիկ կը տանի իրեն» (3-րդ, 74): Սանասարն այդպէս էլ անում է, ոսկի խնձորը դնում է ծոցին, և առաւօտեան ինչ տեսան. տեսան թաղջկայ յերդիսներ բացուի, լոյս տուիւր ի քաղաք»:

Ձեռ. Մովսէս Բ. Աղջիկն առնելու պայմաններն են. «Պողովրտէ սուն գեոյ մէջ դաշտին. ինչ մարդ կտրի, ու ինչ մարդ, ահնու ք գիոյ մէջ ծովու վիշապի բերանի, ինչ մարդ խանի», նոր աղջկան կը տանի իրեն:—Սանասարը սիւնը կտրում է, որի ժամանակ Սամսու կողմից քամի է գալիս, սեան շերտերը շուռ տալիս: Ապա շղթին քշեց մէջ ծովուն... վեար վիշապի գլխուն դադրաւ. գիւրդ ըմ զարկեց վեար վիշապի գլխուն, վիշապ դինք թափ ետու, ահ բերնէն թռաւ, գնաց մէջ դաշտին: Վիշապ դինք թափ ետու, շուր ելից քաղաք ինչը խանձրէ դայ, ընց կուէն քաղաք եթաց: Առաւօտն ինքը Սանասարը բացատրում է Հալեորին թէ «էն դիշեր սեամպ ըմ Սասնայ խետ եկիր էր, տնձրէ էնու մօտէն եկաւ, քաղաք թրջեց»:

Մի ուրիշ պատմութեամբով (8-րդ, 12) Հալեորն ասում է. «Որդի, էնու (Աղջկայ) սէնը երթ ծովու կղզին մատնիք վիշապի բերնի մէջի, հրեղէն մարդ ըմ տըլնի, որ երթայ, մտնի ծով, վիշապի բերնէն հանի բերի, որ անու սէնը բաթալ ըլնի»: Եւ Սանասարը զգնաց մտաւ ծովու տակ. տեսաւ վիշապ գլուխ բարձրացերի, չանգալ վերևանց եթալ, վիշապի բերնէն զմատնիք եհան, դարձաւ իրի խան, կոչ ելաւ քնաւ: Առաւօտ լուս բացուաւ, ծով կատգաւ, վիշապ քամի քաղաք կըլնի»:

Սանասարը ճրագի պէս վառուող ոսկի խնձորը կամ վիշապի բերնից անն առնում է, բայց թագաւորը դեռ չի տալիս իւր աղջկան. նա երկար կուում է թագաւորի զօրքի դէմ կամ աղջկան ուղող փահչկանների հետ, շատ ուտելով, շատ խմելով հաց ու ջրի պահպսութիւն է առաջ բերում քաղաքի մէջ, մինչև որ վերջի վերջոյ եղբայրն իրեն օգնութեան է հասնում և ամենքին յաղթելով՝ առնում է աղջկան:

Այս պատմութիւնը պարզապէս ամպրոպային կուռի մի առասպել է: Ինչքան էլ Վանայ մօտ ցոյց են տալիս Պղնձէ քաղաք, բայց դա մի վիպական անուն է, որ և իւր մէջ փակուած աղջրկանով դուրս է գալիս նաև այլ ազգերի վէպերի մէջ, ինչպէս

Պարսից, Երկինքն իբրև քաղաք պարսպով պատած և անդուռն կամ պղնձի դռներով, շինուած պղնձից կամ ուրիշ մետաղներից՝ յատուկ է շատ հին ազգերի հասկացողութեան: Այդտեղ փակուած աղջիկը նոյն ինքն արեգակն է, որ ծովային վիշապը յափշտակել է: Ակնունք թէ մատանի, իսկապէս մատանու ական, վիշապի բերանին, դա միևնոյն էակն ու արեգակաղջիկն է, որ և մի պատմութեամբով դարձել է Շերազի պէս վառուող ոսկի խնձոր: Արդ այդ ական ու արեգակը դերի է վիշապի ձեռին, ուստի և երկինքը մթնել է, կամ պատկերաւոր խօսքով, աղջկայ ապարանքը, սև ու մութն է, սև վարագուրով ծածկուած է: Գալիս է ծովային հրեղէն դիւցազն Սանասարը, ազատում է վիշապի բերանից ակը և լուսաւորում է քաղաքը, այսինքն արեգակն երևում է: Միւս կողմից, այդ ամպրոպային դիւցազն է «Սասնոյ քամին», «Սասնոյ սև ամպը», որ երբ կուռւմ է ծովային վիշապի հետ, շփուել կատաղում է, բարձրանում է «վիշապ քամին», ինչպէս առասպելներին մէջ կոչւում է ամպրոպն ու պտուտահողմը, և անձրև է գալիս այն քաղաքում, ուր հացի ու ջրի պակասութիւն կայ,— բոլորն այնպիսի դժեռ, որ առասպելաբանութեան մէջ յատուկ են ամպրոպային կուռիւն: Բացի այս ընդհանուր կողմից՝ մեր առասպելի մէջ դանում ենք և այնպիսի դժեռ, որ կան ուրիշ ազգերի նոյն առասպելի մէջ: խաւար կամ ֆնասակար ոյժը, որի ձեռից հերոսը խլում է Աղջկան, յաճախ պատկերանում է, ինչպէս մեր վէպի մէջ, իբրև Աղջկայ հայր և թագաւոր. որը սակայն ինչ որ օտար և թշնամական ունի իւր մէջ, մեծ մասամբ վատ է ընդունում փեսացուներին, չի ուզում իւր յօժար կամքով ձեռից բաց թողնել գեղեցիկ լուսաւոր աղջկան, որին փականքի տակ է պահում. կամ սկզբում այնպէս է ձևացնում, թէ համաձայն է Աղջկան մարզու տալու, բայց յետոյ խնամախօսին կամ փեսացուն ամեն տեսակ արգելքներ ու դժուար իրադրոժելի պայմաններ է դնում, մինչև վերջը դիւցազնը բռնութեամբ առնում է Աղջկան: Եւ այս հասկանալի է, որովհետև նա սկզբնապէս ոչ թէ Աղջկայ հայրն է, այլ ինքը վիշապը կամ վիշապի ընկեր չար ոգիներից մէկը, որ բռնութեամբ տիրում են Աղջկան ու բանտարկած պահում. ուստի և Աղջիկն, ընդհակառակն մեծ մասամբ պատրաստ է իւր յօժար կամքով անձնատուր լինելու հերոսին և նոյն իսկ կուռի մէջ օգնում էլ է նրան, ինչպէս մեր վէպի մէջ:

Դեռ—Վիշապների հետ մօտիկ առնչութիւն ունին դեւերը, որոնք և յաճախ փոխանակում են իրար: Դրանք լեռնային վիթխարիք և հսկաներ են, որոնք երևան են գալիս և ուրիշ ազ-

գերի վէպերի մէջ, ինչպէս պարսից, գերմաններէ Մեր վէպի մէջ կայ մի ընդհանուր տարածուած զրոյց դերերի մասին:

Քառասուն զև կամ հարամի զև գալիս Դաւթի նախրից քառասուն կով կամ հորթ յափշտակում են. Դաւթ ընկնում է ետնհերից, մտնում դերերի այրը, սպանում ամենքին: Այնտեղ նա գրտնում է քառասուն ձի, որոնց մէջ և Քուռկիկ Ջալալին, այնտեղ է և աշխարհի դանձն ու հարստութիւնը, կոյտ կոյտ ոսկի արծաթ, որ մանուկ հերոսը Քեռի Թորոսի հետ բարձում բերում է Սասուն: Դեհերն այդ հարստութիւնը կոզոպուտով են ձեռք բերած ճրանի որ իւր պապ (Դաւթի հայր) մեռեր է, ըզոնք աւերութիւն էրած են ու լցած էդ էր» (1-ն, 155 հտ. 3-րդ, 29 հտ.): Մի պատմութեամբով (7-րդ, 66) այս դերերի տեղ պարզաբար աւագակներ են դուրս գալիս:

Դեհերն ու վիշապները իբրև դանձերի, հրեղէն ձիերի և հրաշալի բաների տէր շատ սովորական են զրոյցների և հեքիաթների մէջ. հերոսները նրանց այրը մտնելով՝ սպանում են նրանց և դանձերն առնում: Յիշենք գերման Զիգֆրիդի՝ Նիբելունգների դանձը ձեռք բերելը, ինչպէս և Թիդրէկի գանձ խելը հսկաներից:

Աւելորդ չէ նկատել, որ կան առասպելաբաններ, որոնք վերևի ընդհանուր զրոյցը՝ կովերի կամ եզների յափշտակութիւնը դերերի ձեռով, գիւցազնի՝ իւր կովերը յետ ստանալը և գանձ ձեռք բերելը կայն, բացատրում են թէ մի տարբեր պատմութեամբ է նոյն ամպրոպային կռուի Կովերը փոխանակում են ակն ու արեգակ աղջկան: Իսկ կովեր յափշտակող դերը ամպրոպային գիւցազնի թշնամի վիշապի ընկերն են, որոնց դէմ և ամպրոպի հերոսը կռւում է, ինչպէս ցարդ մեր Ժողովրդական հաւատալիքի մէջ: Կընշանակէ հին ամպրոպային զրոյցներից մէկը Սանասարի վրայ է պատմուած, միւսը Դաւթի:

Դերերի պատկերով են նկարագրուած Մհերի ճիւղի մէջ և Հալաբայ Թագաւորի սերունդ քառասուն եղբայրները, որոնց ընկերանում է Մհերը և սպանում նրանց մարդակեր զև քրոջը: Սակայն դա պատմական յիշողութիւն է միայն, որի մէջ մարդիկ դեի են վերածուած: Մի ուրիշը, Կուպ Դև, որ քառասուն Թագաւորի աղջիկ է պահում, սպանում է Մհերից, որ այս աղջիկներին պսակում է վերևում յիշած քառասուն եղբայրների հետ (3-րդ 140 հտ.):

Արևմտեւ Մհեր—Այս Մհերն իսկապէս կրկնութիւն է Պստիկ Մհերի, և նրա վրայ պատմութեանը Սանասարի և Դաւթի վրայ պատմութեամբ միջադէպերից կազմուած մի կրկնութիւն է միայն: Միակ գիւցազնական գիծը, որ միայն այս Մհերի

վրայ է պատմուած, որից և նա իւր մականունն է ստացել, է մասնուկ հասակում մի առիւծ սպանելը: Ենդաւ որ մէկ առիւծ փայդաւ հղաւ ճանապարհներէ վրայ, երթացող զաւացող բերադի կըտրեց. մարդ չէր կարնայ ճամբու հետ երթէր. թանգութիւն է ընկնում Սասուն: Մհերը տասնուհինգ տարեկան հասակում հակառակ հօր կամքին գնում է առիւծն սպանելու. «Առան իրար. Մհեր առիւծին սպանեց, քաշեց երկու կտոր արեց, մէկ դրեց ճամբու էն դրադ, մէկ էն դրադ: Նա ձ և ու մ, կիսում է առիւծին»:

Այս պատմուածքը յիշեցնում է Սամսունի, Հերակլի նման արարքները. ուստաց վէպի մէջ ևս Մուլվէյ Ռազրոյնիկը երեսուն տարի կտրում է ճանապարհը, միայն նրան սպանում է Իլիա Մուրոմեց: Ծանապարհ կտրող նման վիթխարիք դուրս են գալիս և դերման վէպի մէջ:

Վիպական հղանակներ ևւ ընդհանուր զրոյցներ Դաւթի Յիւզիցը— Այս ճիւղն, ինչպէս տեսանք, հիմնապէս պատմական է, միայն մոզովուրդն իւր սիրելի հերոսի արարքները զարգարել է շատ ընդհանուր վիպական գծերով և զրոյցներով, որոնց մի մասը արդէն տեսել ենք: Աւելորդ չի լինիլ մի քանի այդպիսիներն ևս մատնացոյց անել:

Բացի մանկական չարութիւններից, որոնք մասամբ և Մհերի վրայ են պատմուած, մի տարածուած զրոյց է Մարայմեքի փորձելը Դաւթին կրակով և ոսկով, որից և թլուատանում է Դաւթի: Այս ամենը յիշեցնում է, օր. Մովսէս մարգարէի մասին պատմուածները. նրա մանկական արարքները Եգիպտոսի փարաւոնի (—Մարայ մեքի) տանը մեծանալիս, նրան փորձելու զրոյցը, նրա թլուատութիւնը ևայլն:

Դաւթի Մարից Սասուն դալն ևս զարգարուած է մի ուրիշ սովորական վիպական գծով. այն է Մարայ մեքիքը պատուիրում է իւր երկու փահլաններին սպանել Դաւթին և արիւնը բերել, որ ինքը խմի. բայց Դաւթին յաղթում է նրանց. նրան չեն սպանում և փահլանները Մարայ մեքին Դաւթի արեան տեղ շան լակոտի արեւն են խմեցնում (Յորդ, 89):

Սովորական զրոյցներից է և Դաւթի կամ Մհերի և Ջէնով Յովանի կնոջ՝ Սառիայի մասին պատմուածը: Անհաւատարիմ Սառիան իւր ցանկութեան չհասնելով՝ ամբաստանում է Դաւթին կամ Մհերին և տնից դուրս անել տալիս նրան: Դա Յովսէփ Գեղեցկի և Մետափրեսի կնոջ պատմութիւնն է ս. Գրքի մէջ:

Նախորդը, որտեղ է մարտիկ իրարուց բաժանել կարելի չէ. նախնական կենցաղի և վէպի մէջ այս երեքը միացած են, ինչպէս և Սասունցոց կեանքի մէջ է եղել: Դաւթը հետզհետէ այս

երեք պարապմունքն էլ ունի. նա գտնարած ու նախորդ է դառնում պողվատէ սոլեր հագած և պողվատէ ցուպ բռնած, որոնք մի օրուայ մէջ մաշուում են: Նրա ոտներին տակ, ինչպէս ուսուսաց վէպի մէջ Իլիայի որդի Սոկոլնիկի, երկիրը թնդում է. գազաններն իրենց որջերից գուրս են փախչում: Նա արագտան է աւելի քան Աբելլէսը. փողովում է վայրի կենդանիք և գազաններ, որ և յիշեցնում է Սամսոնի աղուէսներ բռնելը:

Իբրև որսորդ՝ Դաւիթը յիշեցնում է իւր պարսպապատ որսի սարով՝ մեր հին վիպական որսորդութիւնը: Իբրև մարտիկ և նա վարում է ինչպէս վայել է վիպական հերոսներին: Քնած տեղն թշնամուն սպանելն, օրինակ, վէպերի մէջ համարում է մեծ ամօթ ու նախատինք հերոսի համար: Մեր Դաւիթն ևս սարի գլխից գեղեցիկ կերպով իմաց է տալիս թշնամու քնած բանակին, որ պատրաստուեն իւր յարձակմանը: Նա չի ուզում քնած տեղը Մարայ մեղքին ևս սպանել: Վիպական մի եղանակ է և այն, որ ասպետական մեծահոգութիւնը պահանջում է, որ մէկը միւսի դէմ հաւասար ուժերով կռուեն. հսկան պէտք է հսկայի հետ մենամարտի: Երբ Զոհրաբը յարձակում է հասարակ զինուորների բանակի վրայ ու կոտորած անում, յանդիմանում է Ռոստոմից. ճիշտ ինչպէս մեր վէպի մէջ Հայկորը «փոշտ փոշտ» ասելով յանդիմանում է Դաւիթին բանակի մարդկանց մէջ արած արիւնահեղ կոտորածի համար և յայտնում է թէ Դաւիթն վայել է Մարայ մեղքի հետ կռուել:

Մարայ մեղքը, որ նոյնպէս լեռնանման անարդիլ հսկայ է, ինչպէս գեներ հեքեաթներում՝ օրերով քուն է մտնում: Նա Դաւիթի հարուածը համարում է լուր կծած, մի գիծ ուրիշ ազգերի վէպերի մէջ ևս կայ, օրինակ գերմանական թոռը մուրճով հարուածում է հսկայ Սկրիմիրին, որ ծառի տակ քնած խռմփում է և հսկայական խռմփոցից ծառերի ճիւղերը դառնն են խոնարհում, ինչպէս Մարայ մեղքի շնչից վրանն է դողում. Սկրիմիրը թոռի հարուածից զարթնում, ասում է թէ երևի տերև ընկաւ. երեք անգամ աւելի ու աւելի ուժեղ հարուած ստանալուց յետոյ՝ նոր զարթնում է նա և կռուի ելնում, ինչպէս և Մարայ մեղքը: Մարայ մեղքի փչելն ևս Դաւիթի վրայ, որ պէտք է դրա շնչից թոչէր, զարձեալ մի տարածուած վիպական գիծ է: Նոյն ձևով գերման վէպի մէջ Վիդզան կուում է էտզայր հսկայի դէմ՝ կռուից առաջ թշնամու տանը հաց ուտելուց յետոյ, որ նոյնպէս մի սովորական գիծ է, ինչպէս և մեր Դաւիթն է անում, կռուից առաջ եօթն օր Մարայ մեղքի մօտ հացկերութիւն անելով:

Եւ վերջապէս վէպի մէջ փոխադարձ հայնոյանք, ծաղր,

պարֆենկոտութիւն կային շատ սովորական բաներ են, իբրև նախ-
նական բիրտ բարքերի արտայայտութիւն: Նոյնպէս իբրև նախ-
նական կոխներին նկարագրի՝ մենամարտը, թշնամուն պատուելով
երկու կէս անելը, ծառից կապելով ճեղքելը, այրելը կային:


Դաւթի և Պանդուկի ամուսնութիւնն ևս պատմութեան է ընդ-
հանուր վիպական եղանակով և նման Սանասարի և Քառասուն-
ձիւղ-Մամի ամուսնութեան *): Աղջկայ գեղեցկութեան համբաւի
վրայ քառասուն փեսացուների, փահլեանների կամ արքայորդի-
ների, միաժամանակ գալը. նրանց ծառայ դարձած աղբերը
հարսնացուի տանը, կամ սպանալը քաղաքն աւերել, գեղեցկու-
հու չհաւանելը նրանց, երգիչների միջոցով իր մասին իմաց տալը
նշանաւոր հերոս Դաւթին, սրա լսելով միայն սիրահարուելը Պան-
դուկին, յաղթելը ոսոխ փահլեաններին, որոնց մի քանիսի հետ
օրերով կուռում է. իւր հարսնացուի համար ուրիշ կոխներ անելը,
նրա հետ մենամարտելը, Պաս-բախչայում տեսնուելը կային ասե-
սովորական վիպական ամուսնութեան պատկեր, որի մէջ մտած
են և մի քանի ուրիշ վիպական գծեր, ինչպէս են Դաւթի լծուե-
լը գութանին, Պանդուկի զոնապան համտօլի ձեռքը սեղմելը՝
իւր ոյժը նրան ցոյց տալու համար կային, որոնց նմանները կան
և ուրիշ ազգերի վէպերի մէջ:

Այսպիսի ընդհանուր վիպական գծեր մենք շատերն ևս կա-
րող էինք ցոյց տալ և բաղդատութեան բերել ուրիշ ազգերի վէ-
պերից նմանները, բայց այդ շատ կընդարձակէր մեր աշխատու-
թեան ծաւալը. ուստի թողնելով այդ՝ բաւականանանք յիշելով մի
երկու ընդհանուր տարածուած դրոյցներ ևս:

Հօր եւ որդու կոխը—Մեր նոր վէպի մէջ մտած է շատ
ազգերի վէպերին յատուկ մի առասպել ևս, հօր և որդու
կոխը, որ զանազան ձևերով պատմուած է և նայելով վէպին՝ դա-
նազան վախճան ունի. կամ որդին է սպանում հօրը, կամ հայրը՝
որդուն, կամ երկուսն ևս կենդանի են մնում:

Պարսից վէպով Զոհրաբի մայր՝ Թեհմինան, որին Ռոստամը
իւր ամուսնութեան երկրորդ օրը թողնում է, մեծացնում է որ-
դուն և ուղարկում հօրը որոնելու Թեհմինան Թուրանի Թագաւորի
աղջիկին է, իսկ Ռոստամն իրանի հօրը, որ Թեհմինայի, թշնամու
աղջկայ հետ յարակցութեան մէջ մտնելով՝ յանցանք է գործում,
ուստի և պատժուած է. որովհետև թէպէտև որդին զօրանում է

*) Իսկապէս ասած Սանասարի ու Պոնաձէ քաղաքի Թագաւո-
րի աղջկայ և Դաւթի ու Պանդուկի ամուսնութիւնները միևնոյն
միջադէպի կրկին պատմութեանն են, որոնց նոյն լինելու ման-
րամասնութիւնների մէջ մտնել չենք ուզում:



հօր վրայ, բայց հայրը խարէութեամբ սպանում է նրան: Նոյն կռիւը կայ և կելտահան Կլիզամորի և Կարտոնի համար, որի մէջ որդին հօրից վրէժ առնել է ուզում, այլ և հոռւաց վէպի մէջ Իւլիայի հետ կուտւմ է իւր որդին կամ աղջիկը, որ հօրից իւր մօր անպատուութեան, բռնաբարութեւն վրէժն է ուզում առնել:

Այս կռուի էական կողմն այն է, որ սիրելի հերոսն ապօրինի կենակցութիւն է ունենում թշնամու աղջկայ հետ և պատժւում է այդ բանի համար: Որդին մեծանալով մօր պատիւն է պաշտպանում՝ վրէժ առնելով հօրից: Բայց այս էական կողմը շատ ազդերի վէպի մէջ արդէն դուրս է ընկել: Ինչպէս մի գիշերուայ մէջ Ռոստամի օրինաւոր կինն է դառնում Թեհմինան, ինչպէս և մեր վէպի մէջ Մհերը Դաւթի օրինաւոր որդին է և մի բանի պատժուածքներով ծնւում է նոյն իսկ հօր ներկայութեամբ, մինչ ուրիշ պատմութեամբով Մհերն իւր մայրական պապի տանն է ծնւում և կամ Դաւիթը հեռանում է իւր կնոջ մօտից որդու ծնութեւնց առաջ:

Ամուսնութիւնն ընդհանրապէս հերոսների շուրջ չի կապում: Նրանք յաճախ երկար ժամանակով հեռանում են կնոջից, մինչև անգամ ուրիշին առնում: Այսպէս Ասիւծածև Մհերին կամ Սանասարին կանչում է Մարայ մելքի կինը, որ իրեն առնի և Մարում էլ թագաւորութիւն անի: Մհերն այդ մասին յայտնում է իւր կնոջը, և կինը չի համաձայնում ոչ թէ այն պատճառով, որ Մհերն ուրիշ կին պիտի առնի, այլ որ նա տաճիկ է. «Տիւ ինչի՞ կերթաս. էն տաճիկ է, տիւ խայ-քրիստոնեայ իս, ինչի՞ կերթաս էնու խեա զլոխ մէկ անես»: Բայց Մհերը պատասխանում է. «Ողո տամ էնուր կիւտիկ (զլուխ), որ կը տայ կօտիկ, չառնի կիւտիկ», և գնում է (8-րդ, 20, 7-րդ, 4, 3-րդ, 8): Այսպէս և Դաւիթը հեռանում է Պանդութի մօտից և նայելով պատմութեաներին՝ զանազան նպատակներով:

Նա գնում է Գիւրջիստան Գեղեցիկ աղջիկն ճարելու, իւր ձեռի տակ եղած փաշլեաններին պատկելու և նրանց երկիր, կալուած տալու,—բոլորը ընդհանուր վիպական գծեր: Քառասուն փաշլեաններին պատկելուց և երկիրները կիսելուց ու նրանց բաժին տալուց յետոյ *) ինքն էլ առնում է Սասուն բերում ամենից

*) Գիւրջիստանի տեղ, ինչպէս ուրիշ տեղ նկատել ենք, աղաւաղմամբ մտել է նաև Հաղբեջան: Այս միևնոյն իբրև կրկին պատմութեամբ կայ և Դաւթի որդի Մհերի համար, որ ընկերանում է քառասուն դեր կամ փաշլեանի և սպանելով Կուլ դերին՝ նրա մօտ եղած քառասուն աղջկերանց հետ ամուսնացնում է իւր ընկեր փաշլեաններին և ապա նրանց տէր դարձնում իրենց հայրե-

գեղեցկին, «Գիւրջու աղջկան», որ և Մհերի կինն է դառնում (3-րդ, 127 հտն.), Ուրիշ պատմութեան (8-րդ, 44) Դաւիթը Քանդութի յղութեան ժամանակ գնում է նրա համար գեղեցիկ նաժիշտ բերելու:

Հետագոյ Դաւիթը կնոջը տալիս է, ինչպէս Ռոստամը Թեհմինային, ինչպէս և ուրիշները, մի ոսկի բազրանդ» (3-րդ, 133, 7-րդ, 38. հտն. 8-րդ, 44), որ որդու թւին կապի: Մնւում և մեծանում է Մհերը. նրա հայրը չկայ. նրան պոռնկորդի են անուանում. ինչպէս Ջոհրաբը՝ նա իւր մօրից հարցնում է հօր մասին և ելնում որոնելու նրան: Պատահում է հօրը, որ մի մանկամարդ աղջիկ է բերում. և յանդիմանում է նրան այդ աղկայ համար: Դաւիթը, որ երկու անգամ վախեցած էր, մէկ Մարայ մեկքի զօրքի բազմութիւնից, մէկ էլ Համառից, այժմ էլ վախենում է որդուց, որ աւելի մեծ հակայ է քան ինքը, ինչպէս և Ռոստամը, որ մի անգամ առաջ սպիտակ գէից էր վախեցած, վախենում է Ջոհրաբի, ինչպէս և Իլիան վախենում է իւր որդուց և աղջկանից, որոնք աւելի զօրեղ են քան հայրը: Երկուսն իրար են առնում ձիով և յետոյ ըմբռնաբարտում են, ինչպէս Ռոստամն ու Ջոհրաբը: Իլիայի և իւր որդի Սոկոլնիկի համար ուսաց վէպն ասում է. «Не двѣ горы вмѣстѣ сдвигались, Два богатыря съѣзжались въ чистомъ полѣ», և ապա թէ «Съѣхались, два богатыря, будто двѣ горы вмѣстѣ столкнулись», և այդ երկուսն էլ «По колѣнамъ въ землю приобмялись»,—նոյնպէս և մեր վէպն ասում է թէ ինչպէս երկու սար երթան զան դիպնեն իրար, այնպէս են Դաւիթ Մհեր առած մէկմէկու, և նրանց ոտներն ևս թաղւում են գետինն կոռի ժամանակ. ինչպէս տասներկու թով գութանը ձգես գետինը պատուռի, այնպէս քար ու հող հատում է նրանց ոտների տակին:

Մհերը զօրանում է հօր վրայ և նրան գետին է դնում և ուղում սպանել: Դաւիթն արտասուում է: Այդ ժամանակ բացւում է գաղտնիքը, երբ Դաւիթն ասում է՝ դու որ ինձ սպանես, իմ կարճի ձեռից ինչպէս պիտի պրծնես: Մհերն իմանում է, որ իւր ոտիւր իւր հայրն է, և Դաւիթը Մհերի ապարանջանից ճանաչում է նրան, ինչպէս Ռոստամը Ջոհրաբին: Պարսից վէպի մէջ սաւայն հայրը որդուն մահացու վէրք տալուց յետոյ է ճանաչում. իսկ մերի մէջ վախճանն այդ կողմից բախտաւոր է լինում, միայն

նի Հալիբ քաղաքին: Վէպն ինքն իրեն հակասելով այդ քառասուն փառլեանի հետ դնում է և Կողբադնի երկու որդոց, ազգականներին կամ թոռներին, որոնց սպանելու համար հէնց Մհերը ճանապարհ է ընկնում Սասունից (3-րդ, 139, 140, 146):

հայրն անիծում է որդուն անժառանգ և անմահ մնալ, որ և հաւատեալ մեր հին Վիպասանքից է գալիս:

Ինչպէս են կուտում Դաւիթն ու Մհերը,—պատմութեանքները որոշ պատասխան չեն տալիս, որովհետեւ բոլորի մէջ ևս Մհերն օրինաւոր որդի է: Սակայն թէ մեր վէպի մէջ ևս սկզբնապէս որդին իւր մօր պատիւն է ուղեցել պաշտպանել հօր դէմ, դրա համար ակնարկութիւններ կան: Դաւիթը մի գեղեցիկ աղջիկ է բերում, որի համար և բռնկում է կռիւը, որովհետեւ Մհերն այդ ջահիլ աղջիկը վայել չէ գտնում ծերունի Դաւիթին: Պատմութեանքները Դաւթի բնաւորութիւնն ազնուացնելով այդ գեղեցիկ աղջիկը դարձնում է Խանդութի աղախին կամ Մհերի կին, բայց դա եղել է սկզբնապէս Դաւթի հրկրորդ կինը, որ հնում և մինչև վերջին դարերը սովորական է եղել մեղնում: Նոյն բազմակնութեան սովորութիւնը հայոց համար գտնում ենք և վէպի մէջ. Դաւիթը գտնում է Խանդութին առնելու, բայց միաժամանակ խոստանում է Կապուտկողայ իշխանի աղջկան էլ առնել. շուտքի էն ժամանակը Մովսէսի ժամանակն էր, բացատրում է միամտութեամբ վիպասանը,—որ քրիստոնիայ էր՝ իրաւունք կար երեք չորս կնիկ առնել (7-րդ, 70), Մհերն ուրեմն իւր մօր անպատուութեան վրէժն է առնում, որ հայրը երկրորդ կին է բերում տուն. միայն այս երկրորդ կինն ևս նորազոյն մեղմացած մի պատմութեան է. Մհերն խկապէս ապօրինի զաւակ է, ինչպէս և նրան պոռնկորդի են անուանում զբացի երեխաները: Ուրիշ պատմութեանքներով հօր և որդու կռուի պատճառը որդու անհնազանդութիւնն է. հայրը որդուն այս չարութիւնների համար ապտակ է տալիս, և որդին բռնում է հօր փողպատը, ու կուտում են: Ուրիշ տեղ (8-րդ, 44—47) հօր և որդու կռիւը կրկին անգամ է պատմւած. Մհերն սպանում է քեռիներին, Դաւիթն ապտակում է նրան, ու կուտում են. մէկ էլ՝ Դաւիթն աղախին է բերում Խանդութի համար և Մհերն աղախին պատճառով կուտում է հօր հետ:

Ինչպէս էլ լինի, Դաւթի և Մհերի կռուի պատճառը Դաւթի ապօրինի կենսակցութիւնը չէ Մհերի մօր հետ, որովհետեւ Մհերը միշտ օրինաւոր ժառանգ է: Բայց այս դիժը կայ մեր վէպի մէջ միայն իբրև կրկին պատմութեան: Դաւիթը կուտում է իւր ապօրինի աղջկայ հետ և սպանւում է նրանից: Նոյն կրկին պատմութեանը կայ և Պարսից վէպի մէջ. Ռոստամը բացի Զոհրաբի հետ կռուելուց՝ Զհանգիր նամայի մէջ, որի գլխաւոր հերոսը Ռոստամի երկրորդ որդին է, կուտում է իւր որդու հետ, բայց ճանաչում է նրան և խնայում: Ռուսաց Իլիան բացի որդու հետ կռուելուց՝ կուտում է և աղջկայ հետ: Այսպիսի մի կրկին պատ-

մուածք է և Դաւթի կտիւն իւր աղջկայ հետ, որի պատճառը շատ պարզ է՝ Դաւթի ապօրինի կենակցութիւնն է աղջկայ մօր հետ: Դաւթը նշանուած է Չմշկիկ Սուլթանի հետ. նրանք «մատանիներն իրար հետ փոխել են»։ Բայց Դաւթը թողնում է իւր նշանածին և Խանդութին առնելու գնում: Ժանապարհին նա գիշերը մանում է Չմշկիկ Սուլթանի մօտ և «խաբւում է», այսինքն յարակցութիւն է ունենում, և թողնում հեռանում: Երբ նա Խանդութին առած գալիս է, Չմշկիկ Սուլթանը կտիւ է դուրս գալիս Դաւթի դէմ իւր անպատուութեան վրէժն առնելու համար: Դաւթը երգւում է Խանդութին տուն հասցնելուց յետոյ՝ դալ կտիւն անել, բայց տարիներ անցնելուց յետոյ՝ նոր յիշում է իւր երգումը և գնում Չմշկիկ Սուլթանի կռուի, որի մէջ սպանւում է Չմշկիկ Սուլթանի աղջկանից, որ Դաւթից էր եղել: Դաւթը մահացու վէրք ստացած՝ երկու կտոր է անում իւր աղջկան, ինչպէս Իլիան իւր աղջկան *):

*) Այս սիրոյ և աղջկայ պատմութիւնը նայելով պատմութեաներին՝ փոքր ինչ տարբեր ձևով է. աւելորդ չի լինիլ այստեղ գնել այդ տարբերութիւնները. 1-ն, եր. 178 պատմութեանով Դաւթի հայրը՝ Արամելիքը Խլաթի Իբրահիմ աղայի կնոջ՝ Շրմշըմ Խանումի (=Չմշկիկ Սուլթան) հետ կենակցութիւն է ունենում, որից ծնւում է մի չինի աչքերով աղջիկ, Սա կուում է Դաւթի հետ և սպանւում նրան: Ապօրինի կենակցութիւնն ուրեմն Դաւթից փոխուած է իւր հօր վրայ:

2-րդ, և 6-րդ (եր. 44 հտ. 50, 54 հտն.) պատմութեաներով Չմշկիկ Սուլթանն է կուում Դաւթի հետ և սպանւում նրան, որովհետեւ Դաւթին իւր նշանը յետ էր տուել: Ապօրինի կենակցութիւնը չկայ և վէպն աւելի ազնուացրած է Դաւթի բնավորութիւնը:

3-րդ, ա. և ձեռ. Ափնայ պատմութեաներով (3-րդ, 40, 49 հտն.) Դաւթը Խանդութին առնելու գնալիս՝ ճանապարհին յարաբերութիւն է ունենում Չմշկիկ Սուլթանի կամ Խլաթեցոց Սոֆու ալբի կնոջ հետ, որից ծնւում է մի աղջիկ, որ և կուում է Դաւթի հետ ու սպանւում նրան: Դադանաբարի պատմութեանով (3-րդ, 51, 53) կռուողը և Դաւթին սպանողն է Խլաթի Սուլթան Գմիժ, իսկ 3-րդ, Դ. պատմութեանով (եր. 120, 128 հտն. 134 հտն.) նոյն դերը կատարում է Գոբոնուս ալ Ռէսի Աղջիկ Բանայ Խանումը, որովհետեւ Դաւթին իրեն չէր առել, այլ Խանդութին: Ձեռ. Մոկաց Ա. (3-րդ, 134) պատմութեանով՝ Դաւթի դէմ, երբ նա Գիւրջիս տանից վերադառնում էր, կռուի է դուրս գալիս Մուսուլայ Թագաւորը, կռուի մէջ Դաւթն սպանւում է Չմշկիկ Սուլթանից:

7-րդ, ա. պատմութեանով (եր. 38 հտն.) երբ Դաւթը Գիւրջիս աղջիկ է աղախին բերում, Սուլթան Չմուշ կռուի է դուրս գալիս. կռիւը յետաձգւում է. տեղի է ունենում

Հին առասպելների մնացորդներ:—Պատմութեան մէջ (7-րդ, Բ.) Դաւիթի Որբիկը (=Դաւիթ) չի սպանում Բաղդատի խալիֆային (=Մարայ մելիք). այլ կենդանի բռնում, բերում է, որ իւր մօրը ծառայութիւն անիւ Այնուհետեւ Բաղդատի խալիֆայի, Դաւիթի Որբիկի և սրա մօր համար պատմութեամբ է նոյն զրոյցը, որ մեր հին «վիպասանքի» մէջ ասուած է վիշապ Արգաւանի, Արտաւազդի և Սաթենիկի մասին, և որի զանազան պատմութեան մեր և ուրիշ աղբիւրի մէջ մենք բերել ենք մեր մի ուրիշ աշխատութեան մէջ (Հայ ժող. Առասպելներ եր. 347—354), Այս զրոյցի բովանդակութիւնն այն է, որ որդին յաղթելով թշնամիներին՝ խնայում է նրանց մեծին, որ է վիշապ կամ դև. սրա հետ մայրը ծածուկ սիրողութիւն անելով՝ հիւանդ է ձևանում և զանազան կերպով աշխատում է կորցնել որդուն. միայն վերջը բացւում է դաւաճանութիւնը, վիշապը կամ դևը սպանւում է, պատժւում է և մայրը:

Մի անգամ որ այս զրոյցը կապուել է Դաւիթի Որբիկի և Բաղդատի խալիֆայի վէպին, ժողովուրդն այդ սիրողութիւնը մեղմացնելու համար՝ Դաւիթի Որբիկի մօրը դարձրել է Բաղդատի խալիֆայի նշանածը, որին Դաւիթի Որբիկի հայր Աբլաղը յափշտակել, իւր կիներն է դարձրել: Բաղդատու խալիֆան այդ պատճառով յարձակում է գործում Սասնոյ վրայ, յետ է խլում իւր

հօր և որդու կուրը, և ապա նոր Սուլթան Չմուշի հետ կռուելով սպանւում է Դաւիթը: 7-րդ Բ. պատմութեամբով (եր. 68 հտն) Դաւիթը սպանւում է Կապուտկողի իշխանի կնոջ աղջկանից, որովհետև Դաւիթը խոստանում է նրան էլ առնել, բայց չի կատարում իւր խոստումը: Այդ աղջիկը ծնուած էր Դաւիթի պապ (խակապէս՝ հայր) Աբլաղից, որ աղջկայ մօր հետ սիրողութիւն էր արել:

8-րդ, Բ. պատմութեամբով Դաւիթի դէմ կռուի է դուրս գալիս Չնայ թագաւորը, որովհետև Դաւիթի խալիֆայի (խակապէս կին) բերում է, նրա նշանածն է. կռուի մէջ Դաւիթն սպանում է մի պառաւ. 9-րդ ա. պատմութեամբով Դաւիթն սպանում է Սուլթան Չմուշ, որովհետև Դաւիթը նրա աղջկան առնել չի ուզում. իսկ 9-րդ Բ. պատմութեամբով Դաւիթ սպանում է խալիֆային եւ իւր դէմ կռուելիս. կնոջ անուն չկայ. միայն երբ Մահրը հօր վրէժն առնելու համար խալիֆն աւերում է, սպանում է մի պառաւի, որ անշուշտ Չմշկիկն է:

Այսպէս պատմութեան մեծ մասի մէջ սիրողութիւնը և նրանից ծնուած աղջիկը չկայ, կամ Դաւիթի հօր վրայ է փոխուած: Սակայն դա վէպի նախնական ձևն է, և միայն վէպն ազնուացնելու համար է դուրս ձգուած Դաւիթի սպանման իբրև շարժառիթ թողնելով միայն Դաւիթի իւր խոստումը չկատարելը:

նշանածին (Աբլաղի կնոջը)։ Բայց Աբլաղն իւր եղբօր՝ Իշխանի հետ հասնում ազատում են կնոջը, իսկ Քալիֆան փախչում է։ Աբլաղի մահից յետոյ երկրորդ անգամ յարձակում է Բաղդատի Քալիֆան, բայց յաղթւում է Աբլաղի որդի Դառնիկ Որբիկից, որ և բռնում է նրան։ Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու՝ ասենք, որ Բաղդատու Քալիֆայի այս երկրորդ յարձակումը՝ Դաւթի և Մարայ մելքի կռիւն է, փոքր ինչ փոփոխուած, իսկ առաջին յարձակումը (եր. 51—53) Սանասարի կամ Բաղդասարի ամուսնութեան մի կերպարանափոխ եղած պատմութեան է լոկ։ Աբլաղը մի և նոյն Սանասարն է, Իշխանը՝ նրա եղբայրը (Իշխանը յետոյ և Քեռի Թորոսի կամ Ձէնով Յովանի տեղ է անցնում), իսկ Բաղդատու Քալիֆան ևս պարզ կերպով անցած է այն վիշապի տեղ, որից Սանասարը խլում է Պոնտի քաղաքի Թագաւորի աղջկան։ Կրնշանակէ հին առասպելական վիշապին փոխանակած է Բաղդատու Քալիֆան։

Այս միևնոյն Բաղդատու Քալիֆան ահա Աբլաղի որդի Դառնիկ Որբիկի (—Սանասարի որդի Դաւիթ) և իւր մօր պատմութեան մէջ դուրս է գալիս՝ առանց հին Արգաւան վիշապին։

Հին առասպելներից՝ բացի Սաթենիկի սէրն առ վիշապ Արգաւանը՝ մնացել է և «Վիպասանքի» առասպելների շարունակութիւնն ու վերջը, այն է Արտաւազդի՝ իւր հօր անէծքի տակ փակուելը Մասիսի մէջ, որ նոր վէպի մէջ պատմում է Դաւթի որդի Մհերի համար, որը նոյնպէս իւր հօր անէծքի տակ փակւում է, միայն Տոսպան բլրի մէջ, որով և վերջանում է նոր վէպը։ Այս առասպելի մասին ևս մենք մանրամասնօրէն զրել ենք մեր վերելում յիշած աշխատութեան մէջ, ուստի կրկնութիւն անել չենք ուզում։ Միայն այս ասենք, որ դա ևս շատ տարածուած մի անկախ առասպել է վիշապի փակուելու մասին, որ հին «Վիպասանքի» մէջ միացել է Արտաւազդի և Արգաւան վիշապի առասպելին։ Նոր վէպի մէջ այս երկու առասպելն անշուշտ հին վիպասանքից են անցած արդէն այսպէս միացած ձևով։ միակ փոփոխութիւնն այն է, որ երկրորդ առասպելն, ինչպէս սպասելի էր, Դաւթի վրայ չի պատմուած, այլ իւր որդի Մհերի վրայ։ Սակայն դա զրոյցի մի սովորական բաժանումն է երկուսի, որի զեղեցիկ օրինակը գտնում ենք ի միջի այլոց, 7-րդ, Բ պատմութեան մէջ, ուր մի Սանասարը դարձել է Սանասար և իւր որդի Աբլաղ, մի Դաւիթը դարձել է Աբլաղի որդի Դառնիկ Որբիկ, սրա որդի՝ Դաւիթ, և սրա որդի Թլոր Դաւիթ։ Մի հերոսի վրայ պատմութեանը երկուսի, երեքի բաժանուելով՝ ասւում է հօր ու որդու վրայ, որոնցից մէկը կամ միւսը ի հարկէ նոր է մտնում վէպի

մէջ, դառնալով հին հերոսի որդի կամ հայր և իւր վրայ առնելով նրա զրոյցի մի մասը: Այսպէս և մեր հին առասպելներէ մէջ ամպրոպային աստուած Վահագնի համար ստեղծուել է մի հայր՝ դիւցազն Տիգրան, որ և իւր վրայ է առել վիշապ Ափղահակի դէմ կռիւը, որ սկզբնապէս անշուշտ Վահագնինն է եղել: Այդ միևնոյն կռիւը նոր վէպի մէջ, տեսանք, պատմուած է Սանասարի վրայ, որ ունի ամպրոպային դիւցազնի յատկութիւններ:

Նոր վէպի մէջ եղած դիւցազնական առասպելները համեմատելով մեր հին առասպելներին՝ գտնոււմ ենք, որ հին առասպելները գրեթէ ամբողջապէս մտել են նոր վէպի մէջ, այն էլ նոյն դասաւորութեամբ, որ ունեն այդ առասպելները մեր հին լեզուական անոթներէ մէջ, սրա մի մասը համարելով և դիւցազն Տիգրանի առասպելը, որոնց բոլորի ընդհանուր կեդրոնն է վիշապների դէմ կռիւ: Այս լեզուական մէջ, պատմական յիշողութիւնները մի կողմ թողնելով, կան միայն հետեւեալ երեք առասպելը.

1) Դիւցազն Տիգրանը, որ փոխանակած է ամպրոպային աստուած ծովածին հրեղէն պատանի Վահագնին՝ դարձնելով սրան իւր որդին, ունենում է ամպրոպային կռիւ վիշապ Ափղահակի հետ, յաղթում է նրան, ազատում իւր քրոջը, գերում Ափղահակի կնոջը՝ Վիշապայ մօրը:

2) Այս վիշապներն այնուհետև հանդէս են գալիս Արտաշէսի վէպի մէջ. որդին Արտաւազդ կուում է վիշապների հետ, յաղթում նրանց. իւր մայրը՝ Սաթնիկ սիրողութիւն է ունենում նրանց զլխաւորի հետ կայն:

3) Արտաւազդը հօր անէծքի տակ փախում է Մասիսում: Այս երեք առասպելն ևս գրեթէ նոյնութեամբ կան այժմ մեր նոր վէպի մէջ:

1) Մեր հերոսների նախնին Սանասար, Մովածին ու Հրեղէն մարդ, ունի ամպրոպային հերոսի յատկութիւններ. պատանի հասակում կուում է վիշապի հետ, յաղթում է նրան, ազատում Աղջկան, որ իւր կինն է դառնում: Ուրիշ խօսքով կատարում է նոյն ամպրոպային կռիւը:

2) Վիշապն այնուհետև, ինչպէս տեսանք, իբրև Բաղդատի Քալիֆայ հանդէս է գալիս Դաւնիկ Որբիկի վէպի մէջ, յարձակուելով Սանոյ վրայ և կամենալով խլել իրենից՝ Դաւնիկ հօր ձեռով յափշտակած կնոջը, բայց յաղթում է Դաւնիկ Որբիկից՝ սրա մայրը, սակայն, ծածուկ սիրողութիւն է անում նրա հետ:

3) Դաւնիկ Որբիկի—Դաւթի որդի Մհերը—իւր հօր անէծքի տակ փախում է Տոսպան բլրում:

Մեր հին առասպելների և նոր վէպի մէջ եղած առասպել-

ների նոյնութիւնն այն աստիճանի է, որ կարելի էր կարծել նոյն իսկ թէ նոր վէպը միևնոյն հին վիպասանքն է, որ մինչև այժմ կենդանի մնում է միայն կրելով դարերի պատմական ազդեցութիւնը: Մինչ հին առասպելների մէջ հին պատմական անուններ են՝ Տիգրան-Վահագն, Արտաշատ, Արտաշէս կայն, որոնց ժամանակի, ինչպէս և Հրադամիդդի ու Տրդատ Ա.-ի, պատմական յիշողութիւններ մտած են առասպելների մէջ, և կազմել Տիգրան-Վահագնի, Երուանդի, Արտաշէսի ու Արտաշատի վէպը. նոր վէպի մէջ հին վիպասանքից դուրս է ձգուած բոլոր պատմականը, պահելով միայն դիւցազնական առասպելները՝ Սանասար, Դաւիթ ու Մհեր անունների տակ, առասպելների մէջ մտցնելով գծեր միջնադարեան պատմականից, յատկապէս Դաւիթ Արքայի ժամանակից սկսած, այլ և ուրիշ ընդհանուր զրոյցներ:

Արդարև, հին դիւցազնական առասպելները ամենայն ժողովրդի մէջ ևս շատ դժուար են մոռացուում. նրանք երկար դարեր ապրում են ժողովրդի բերանին, այսպէս ասած՝ միշտ հին պատմական հագուստի տեղ նորը հագնելով. բոլոր պատմական հիմունք ունեցող վէպերը երկար թէ կարճ ժամանակ ապրելով վերջի վերջոյ մոռացութեան են տրուում, իսկ դիւցազնական առասպելները, որոնք հիմք ունին հին հեթանոսական հաւատալիքները, միշտ նորոգուելով յարութիւն են առնում: Ուստի և զարմանալի չէ, որ մեր հին առասպելները նոյնպէս երկար դարեր ապրելով երևան են գալիս այժմ մեր նոր վէպի մէջ, ճիշտ ինչպէս մինչև այժմ ևս մեր ժողովրդի մէջ դեռ կենդանի մնում են այդ առասպելների հիմք կազմող հեթանոսական հաւատալիքները: Բայց որքան մենք ծանօթ ենք մեր նոր վէպին և որքան տեղեկութիւն տալիս են մեզ մեր Գարդ ունեցած պատմութեանը, այդ հին առասպելները չեն կազմում մեր նոր վէպի սաղմը, էական կեդրոնը, որոնք իրենց քաշած միացրած լինելին նոր պատմական յիշողութիւններ և ուրիշ զրոյցներ: Հին առասպելներն իսկապէս հագցուած են նոր վէպի մէջ. նոր պատմական-վիպականն ու հին առասպելականը իբրև զոյգ ու կից, բայց անջատ բաներ են պատմում և ոչ թէ իբրև մի անբաժանելի միութիւն, այնպէս որ եթէ նոր վէպից այդ առասպելները դուրս ձգուին, ինչպէս և շատ պատմութեանների մէջ չկան, զրեթէ ոչինչ չի կորչիլ: Երևում է, որ նոր վէպն այդ առասպելներից անկախ բան է, և առասպելները յետոյ միայն մտել են վէպի մէջ. այսինքն նախ պատմուել է երկու եղբոր Հայաստան գալն ու Սասունում հաստատուելը, և ապա յետագայում միայն վերագրուել է նրանց Վահագն-Տիգրանի ծնունդն և Վիշապի դէմ ամպրոպային կռիւը, այսինքն Պղնձե Թա-

գաւորի աղջկայ պատմութիւնը, որի մի կողմ զպատմեալք է մեր այժմեան վարիանտներէ մէջ Խանդութի մասը, որը և նման է եղել, ըստ Խնճիճեանի վկայութեան, Տիգրանուհու վէպին: Նոյն ձևով յետագայում մտել է վէպի մէջ և Արտաւազդի մօր սէրն առ Արգաւան վիշապը՝ իբրև Դառնիկ Որբիկի (—Դաւթի) մօր սէր առ Բաղդասուր Խալիֆան, որ փոխանակած է վիշապին, այլ և Արտաւազդի փակուելը Մասիսի մէջ՝ իբրև Դաւթի որդի Մհերի փակուելը: Երկուսն ևս հօր անէծքի տակ են և անմահ մնում են, միայն մէկին հայրն անիծում է այն պատճառով, որ նախանձում է իւր հօր փառքին, իսկ միւսին նրա համար, որ կուռւմ է հօր հետ:

Ամփոփենք մեր եզրակացութիւնը:

Մեր «վիպասանքի» առասպելները երկար ժամանակ, անշուշտ դարերի պատմական ազդեցութիւն կրելով, ապրել են մեր ժողովրդի մէջ: Դրանք մինչև այժմ ևս իրարուց անջատ ու անկախ դեռ պատմում են իբրև հեքաթ կամ զրոյց: Մեր նոր վէպը նախորդ գլուխներում բացատրած ձևով կազմուելուց յետոյ՝ հետըզհետէ ստացել է դիւցազնական կերպարանք, իւր մէջ ընդունելով ընդհանուր առասպելներ և զրոյցներ ու գծեր: Այդ ձգտման ազդեցութեան տակ և մեր հին վիպասանքի առասպելները, որ դեռ կենդանի են եղել ժողովրդի մէջ, ամբողջապէս, նոյն դասաւորութեամբ մտել են նոր վէպի մէջ:

Մեր նոր վէպն, ուրեմն, ըստ պատմականին և ոգուն, մի տեսակ շարունակութիւն է հին ժողովրդական վէպի, իսկ ըստ դիւցազնականին՝ նա նոյն մեր հին վիպասանքի առասպելներն է պահում իւր մէջ: Այդ երկու տարերքից զուտ իւր մէջ ունի նոր պատմական յիշողութիւններ արարական ժամանակից սկսած, և ապա ուրիշ ընդհանուր զրոյցներ և շատ նոր կենցաղական գծեր, որոնց մի մասը տեսանք:

Ժ.

ԿՐՕՆԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՂԱՓԱՐՆԵՐԸ

Առասպելներն ինչքան էլ կենդանի լինեն, շատ մեծ հնութիւնից են գալիս. նրանք դիւցազնների հեթանոսական հաւատալիքների մնացորդ են, ուստի և նրանց բուն իմաստն այժմ մթնացած և անհասկանալի է ժողովրդի համար: Որպէս զի ժողովուրդը հաւատայ դիւցազնների գոյութեան ու արարքներին և ընդհանուր առասպելներին ու զրոյցներին, այդ ամենը պիտի պատմէր իւր

կենդանի աշխարհայեցողութեան համեմատ և դիւցազններն պիտի կապէր իւր այժմեան կենդանի քրիստոնէական հաւատքի հետ: Ճիշտ ինչպէս հեթանոսական աստուածներն արարքներն ու յատկութիւնները վերագրուել են քրիստոնէական սրբերին, և վերջիններս անուան տակ դեռ ապրում և հաւատացում է հեթանոսութիւնը, նոյն ձևով և մեր վէպի դիւցազնները և նրանց տոհմապիւնները քրիստոնէական գոյն են ստացած և յարմարեցուած նոր ժողովրդական գաղափարներին, ուստի և դեռ կենդանի մնում են մեր վէպի մէջ: Հետաքրքիր է տեսնել թէ Բնշ կերպ մեր վէպի մէջ հեթանոսականը քրիստոնէականի է վերածուած, թէ Բնշ պիտի կրօնական-բարոյական հասկացողութիւն ունի մեր ժողովուրդն աշխարհի և իրերի վրայ և կամ ինչ գաղափարներ է ուղեցնել զարգացնել մեր վէպը:

Ժողովրդական վէպը ժողովրդի կեանքի և հասկացողութեան բաղմակողմանի պատկերն է, նրա ձգտումների մարմնացումն: Եթէ մենք այդ կեանքի բոլոր կողմերը վերցնելու լինէինք, ստիպուած պիտի լինէինք շատ երկարելու, ուստի այստեղ միայն մի քանի կարևոր կէտերով բաւականանանք, մանաւանդ որ կեանքի մի քանի գծեր արդէն առաջ ուրիշ առթիւ մէջ ենք բերել:

Աստուած և աղօթք:—Մեր վէպի մէջ, և ոչ միայն մեր, աչքի զարնող մի երևոյթ է, որ ոչ մի նշանաւոր գործ չի կատարուում առանց Աստուծու Շարունակ զգացում է, որ պատմուած առասպելներն մէջ աստուածային կամքն է արտայայտուում, և որ գերազոյն զօրութիւնը ներկայ է իւր կամքով, իշխում և ազդում է դէպքերի վրայ: Այս պատճառով և մեր վէպը կարելի է համարել իսկապէս մի կրօնական վէպ:

«Ի՞նչ է Աստուած», այս հարցին Դաւիթը պատասխանում է. «Աստուած էն է, ինչ որ մեզ ստեղծել է ու պահում է» (3-րդ, 130): Նա «Արարող» է, «սար ու ձորի ստեղծող», «Բարերար է և ողորմած», ուստի և «օրհնեալ է և միշտ յիշեալ»:

Դա իսկապէս մի խորհրդաւոր ու գաղտնի զօրութիւն է, որից կախուած է մարդու գործունէութիւնը, և որի «հրամաններն», իբրև մի ճակատագրի, անպայման հնազանդում է մարդ: Ինքն Աստուած իբրև մարմնացեալ գործող անձ երբէք երևան չի գալիս վէպի մէջ. այլ նա միայն իւր ձեռին ունի մարդկանց ամբողջ կեանքը. հեռուից անտեսանելի կերպով կառավարում է աշխարհը իբրև «միայն Տէր» և թագաւոր:

«Թագաւոր, Բնշ Թագաւոր. ապա մենք Թագաւոր Տէր Աստուած գիտենք» (3-րդ, 76): Ահա աշխարհի իսկական իշխանը, որին ճանաչում է դիւցազնը:

Կարելի է ասել ոչ մի դիւցազնական գործ չի կատարուում առանց «Աստուած կանչելու», Աստուծու անունը տալու, նրան յիշելու Դիւցազները միշտ Աստուծուն են դիմում աղօթքով, յաճախ լալով (7-րդ, 24, 33, 1-ն, 138, 9-րդ, 389, 374):

Աղօթքի համար կան պատրաստի որոշ բանաձևեր, որ հերոսները հարկաւոր դէպքերում կրկնում են՝ վրան աւելացնելով և իրենց խնդիրը: Եկեղեցական զբաղման աղօթքներ չկան. միակ բացառութիւն կազմում է հաց օրհնելու համար, ինչպէս կենցաղի մէջ, ասուած «Հայր մերը». բայց մրքան աղաւաղուած և անհասկանալի դարձած (3-րդ, 122): Դա բուն ժողովրդի աղօթք չէ, ուստի և Դաւիթը, որ իբրև մեծ՝ հացն օրհնում է, «Հայր մերից» առաջ և յետոյ կրկնում է. «Անուն Յիսուսին Բրիստոսին, անուն Աստուծուն Աստուած»: Սովորական պատրաստի բանաձևերից են.

«Օրհնեալ, բարերար Աստուած,

Քո հրամանքն էր շատ.

Հրամանք անես՝

Հարաւ քամին իջնէր...»

«Ողորմած բարերար Աստուած...»

«Մարեր ձորեր ստեղծող Աստուած...»

«Օրհնեալ բարերար,

Կամքն օրհնեալ է Արարողին...»

Կանչենք սարերու սրբեր,

Ձորերու Կոյս Մայր Աստուածածին,

Դու օգնական պահապան լինիս...»

(2-րդ, 26 հտ. 50, 54, 3-րդ, 133, 7-րդ, 52, 58, 60, 72, կայն):

Աստուծու ձեռին է, ասացինք, «հրամանքը», այսինքն մարդկանց ճակատագիրը: «Աստուած մէկ է, բայց իւր զուր հաղար», նոյնպէս և «Աստուծու հրամանքը շատ է», որովհետեւ նա ողորմած և բարերար է: Եւ միշտ դիւցազն Աստուծոյ այդ հրամանքն է հայցում:

Աստուծու հրամանքն առանձնապէս հարկաւոր է հրաշալիս ու գերբնականը կատարելու համար, այն որ մարդկային ուժի ու կարողութեան սահմանից վեր է: Այսպէս միշտ Աստուծու հրամանքով ձին լեզու է գալիս ու խօսում. Աստուծու հրամանքով, երբ Դաւիթ քամի է ուզում, քամին գալիս է. Աստուծու հրամանքով կտրած ձեռք ողջանում է, խաւարած աչքը լուսաւորւում. Մհերի հայրն ու մայրը գերեզմանի միջից ձայն են տալիս. Դաւիթ շղթայով կապուած՝ ինքն իրեն թափ է տալիս, «շղթայի կտորներն երկնքից ցած են գալիս»: ձին ակնթարթում թռչում

հասնում է տեղ, եայլն եայլն (2-րդ, 26 հտ. 53 հտ. 7-րդ, 33, 35, 60, 9-րդ, 389 եայլն):

Աստուածամեն անգամ պատրաստ է դիւցազնի ցանկութիւնը կատարելու, նա «Մուրադ Աստուած» է, միայն թէ դիւցազնը իրեն դիմէ, և նա միշտ յիշում է Աստուծուն, ամեն բան «Աստուծով» է անում:

Այսպէս ուրեմն զերբնականն ու հրաշալիին, որ իշխում է մեր վէպի մէջ, հեքաթային հրաշալիքը չէ. դա կապուած է ժողովրդի կենդանի հաւատքի հետ, ժողովրդի համար իրականութիւն է, ինչպէս իրօք եղել և պղծել են իրենք հերոսները: Բայց ինչ՞ու Աստուած հերոսներին լսում է և կատարում նրանց այդպիսի խնդիրը:

Շնորհք և անձնակամութիւն—ժողովուրդն իւր անուս դրութեան մէջ իհարկէ աստուածաբանական ընաւորութիւն չէր կարող տալ իւր վէպին, և ոչ փրկիսոփայութիւն անել: Վերացական դատողութիւններ աշխարհի կառավարութեան կամ նախախնամութեան մասին չկան գրեթէ: Ժողովուրդը բանաստեղծում է. բայց բանաստեղծական կենդանի պատկերներին և ձևերի տակ պարզ երևում է նրա հայեացքն աշխարհի իրերի այն կողմի մասին, մի շատ տարրական և պարզ հայեացք, որից անշուշտ,—ինչպէս յաճախ գիտականի սկիզբը ժողովրդականի մէջ է,—ծագել է աստուածաբանական զաղափարը «շնորհքի» մասին:

Աստուածաբանների հասկացողութեամբ «շնորհքը» առանձնապէս մի զերբնական և ձրի պարզ և ու տուրք է, որ Աստուած բաշխում է մարդկանց՝ նրանց արդարացնելու ու փրկելու համար: Այսպէս ասած շնորհքն շնորհք է կամ միացական է, այսինքն մի անգամ տրուած է մարդուն և յարատև մնում է մարդու մէջ, կամ ամեն պարագայում նոր տրոււմ է իբրև ներգործական շնորհք: Այս հասկացողութեամբ մեր հերոսները յարատև ունին իրենց մէջ միացական շնորհք. նրանց «ազգին տուովի ա», «նրանցը տուածութիւն է (7-րդ, 51, 66) այսինքն ժառանգաբար իրենց մէջ կրում են աստուածային տուրքը: Այն զերբնական աստուածային ոյժը, որ ունին հսկաներն՝ ըստ հեթանոսական հայեացքի՝ այն պատճառով, որ ծովից են ծնուած, այսինքն դիւցային ծագում ունեն, քրիստոնէական հայեացքով բացատրուած՝ դառնում է ուրիմն աստուածային տուրք, ձրի շնորհք:

Ժիշտ նոյն ձևով իբրև աստուածային շնորհք է հասկացւում և ջրից ոյժ առնելը եայլն, որ, ինչպէս տեսանք, ըստ հեթանոսականին, հսկաների ծովային լինելովն է բացատրւում: Զէնով Յովանը Դաւթին ասում է. «Կաթնաղբիւրի վրայ իջիւր, քնիւր,

շնորհք Աստուծոց կառնես, և Դաւիթը ջուրը խմում է ու քնում և շնորհքն Աստուծոց առաւ, այսինքն հսկայամարմին դարձաւ (7-րդ, 23)։

Այսպէս աստուածային շնորհք է համարւում և ամեն դիւցազնական գերբնական գործ, որի համար հերոսներն առանձնապէս դիմում են Աստուծուն և նրա հրամանքը խնդրում, որ Աստուած շնորհում է նրանց։ Ե՛ն ժամանակ արդար մարդ էին, ինչ մուրազ անէին՝ Աստուած կը կատարէր, բացատրում է վիպասաններից մէկը (2-րդ, 41)։ Կը նշանակէ արդարութեան համար է, որ Աստուած գերբնական տուրքերով նայելով պարագաներին՝ օժտում է հերոսներին։ Ճիշտ է, քրիստոնէական աստուածաբանական հայեացքով աստուածային շնորհքի նպատակն է մարդուն արդարացնել, իսկ վիպական հայեացքով՝ մարդիկ արդար են, դրա համար և Աստուած իւր շնորհքը տալիս է նրանց, բայց այս երկուսը գործնականի մէջ նոյնանում են։ Դիւցազններն արդար են, որովհետև նրանց ձգտումներն արդար ու սուրբ են, նրանք շարունակ դէպի արդարութիւնն են դիմում։ Բայց և նրանք արդար են, որովհետև աստուածային շնորհք ունին։ Պիտի մեր ազգ չխարուէր, ես ինչո՞ւ խարուեցայ մէկ կնոջ ապով, ասում է Դաւիթը միշտ գործելուց յետոյ (3-րդ, 41)։ Բայց ինչո՞ւ չպիտի մեղանչէր Զոջանց ազգը և միշտ դէպի արդարն ու սուրբը ձգտէր, միայն նրա համար, որ ճերանցը տուովի է, այսինքն ունին գերբնական ձրի պարգևը։

Աստուածային շնորհքը հարկաւոր է մեծամեծ գործեր կատարելու համար։ Բայց այդ շնորհքը մարդուս մի կրաւորական էակ չէ դարձնում, որ այս կամ այն պէս գործէ, որովհետև Աստուած այս կամ այն պէս է կամենում՝ այլ նա ունի իւր ազատ կամքը, նա անձնիշխան է։ Եթէ մարդս յանցանք է գործում, մեղանչում, այդ նրա ազատ կամքով է լինում։ Այսպէս Դաւիթը աստուածային շնորհքն ունենալով հանգերձ՝ մեղանչում է իւր կամքով, այն էլ մի քանի տնգամ։ Միւս կողմից եթէ շնորհքն իջնում է նրա վրայ, միայն այն պատճառով որ ինքը հերոսն այդ կամենում է՝ ամեն անգամ դրա համար Աստուծուն դիմելով։ Շնորհքն ու անձնիշխանութիւնն ուրեմն հաշտեցրուած են մեր վէպի մէջ։ Բնատուր ժառանգական ոյժը՝ իրրեւ մնացական շնորհք՝ հերոսի կամքից դուրս է, իսկ ներգործականի մէջ կամքն ազատ է։ Որով հերոսները շնորհքի կամ աստուածային հրամանքի կոյր խաղալիք չեն դառնում և ստանում են ներքին բարոյական արժանաւորութիւն։

Ե Ր Ղ Մ Ն Ա Ս Վ Ս Հ Ո Ւ Թ Ի Ն Է պահանջում հերոսից ամենից

առաջ իբրև դիւցազնական բարոյական առաքինութիւն: «Սուրբ Նշանի» հունար էն էր, որ զինք պիտի չհրդուէր. իսկ մի անգամ որ երգուում են, երգումը պիտի պահել: Երգման շաւիթը «երգումակոտոր է լինում», այսինքն թեի Մսէ խաչը սևանում է, և նա ուժից ընկնում է՝ կորցնելով Աստուծու շնորհքն ու սպանւում է: Այսպէս երգումակոտոր են լինում ու մեռնում նաև Առիւծաձև Մհերն ու իւր կիներ (3-րդ, 82 հտ. 7-րդ, 4 հտ.):

Գարբիէլ հրեշտակ,—եթէ Աստուած անձամբ չի մասնակցում վէպի գործողութեանը, թէպէտև ամենայն ինչ նրա կամքով է լինում, հրեշտակներն ու սրբերը հանդէս են գալիս իբրև գործող անձեր, ճիշտ ինչպէս յունական վէպի մէջ աստուածները: Եւ ինչ են իսկապէս մեր հրեշտակներն ու սրբերը, եթէ ոչ նոյնպէս պաշտելի էակներ, որոնց նոյն իսկ աղօթում են: Խանդութիւն աղօթում է—

«Մարեր ու ձորեր ստեղծող Աստուած,

Դու հայր ու որդին իրարուց ջոկես:

Բայց նա Աստուծուն հաւասար դիմում է և հրեշտակներին ու Աստուածածնուն.

«Ինն դաս հրեշտակներ, ձեզ եմ կանչել,

Դուք հայր ու որդին իրարուց ջոկէք.

Ո՛վ սուրբ մայր Աստուածածին, քեզի կը կանչեմ,

Դու հայր ու որդին մէկմէկուց ջոկես:

Հրեշտակներից մեր ժողովրդի մէջ ամենից կենդանի պատկերացում է Գարբիէլը, և այս՝ այն պատճառով, հեթանոսական Հոգէտա Գրողին քրիստոնէութեան ժամանակ փոխանակել է Գարբիէլ հրեշտակը: Նա իւր այս դերի մէջ մասնակցում է վէպի գործողութեանը. հոգին նրա աւանդն է, և նա պիտի առնի: Այսպէս՝ գիշերը Գարբիէլը գալիս է Մհերին, որ երգումակոտոր էր եղել և պիտի մեռնէր, ասում է, որ պատրաստութիւն տեսնի՝ հոգին առնելու է: Մհերը քառասուն օր միջոց է ուզում իւր մեղքերը քաւելու: և նոր Գարբիէլը գալիս է, նրա հոգին առնում (3-րդ, 82, 4-րդ, 432):

Դաւիթ ու Մհեր կուում են. քիչ է մնում իրար սպանեն. Խանդութիւն աղաչում է, որ Գարբիէլ հրեշտակն իջնու հայր ու որդի բաժանէ իրարուց: Եւ Գարբիէլն իջնում է, մէկի կամ միւսի հոգին առնելու տեղ՝ բաժանում է սարերի նման հսկաներին, «ինչպէս որ երկու աքլոր կռուեն, մէկն երթայ յետ կտրի իրարուց»: Եւ երբ հայրը բարկացած՝ անիծում է որդուն, որ ժառանգ չունենայ, հրեշտակը լսում է նրան, «Մհերի միջաց երակ քաշում է, որ էնու. մօտէն ժառանգ չընկնի դուրս մէջ աշխարհքին»:

Սուրբ Սարգիս—Աւելի հետաքրքիր է սուրբ Սարգսի մաս-

Նախկցութիւնը գործողութեանը: Քրիստոնէական սրբերի վրայ յաճախ անցել է հեթանոսական աստուածների դերը: Այդպիսիններից մէկն է ս. Սարգիսը, որ իւր վրայ առել է Հոգւմի աստուածութեան պաշտամունքը (տես մեր Volksgl. եր. 95 հտն.): Նա իբրև այդպիսին, ինչպէս ուրիշ ազգերի մէջ հոգւմի աստուածութիւնը, արագահաս է և նեղութեան մէջ ընկած կտրիճներին օգնութիւն է գալիս, հովանաւորում է մանաւանդ նրանց, որ ամուսնութեան են դիմում: Վէպի մէջ ևս նա կատարում է իւր այս դերը:

Դաւիթը Պանդութին առնելու նպատակով գնում է բերելու իւր ռոսի փաշլեանների գլուխը: Փաշլեաններ տեսան որ ձիաւոր մի կիդայ, ձիու թող երկինք կենի: Ասեցին,—էդ ձիաւոր կռուի համար կիդայ. չգիտենք ընդի Սրգոյի (սուրբ Սարգսի) շորդերմէցն է՝ (Յն, 173): Նոյն դէպքում ուրիշ պատմութեան մէջ, երբ Դաւիթը Համգայ փաշլեանին ասում է թէ քո զլուխն եմ ուզում, որ Պանդութին նշանաբան տանեմ, փաշլեանը հարցնում է. «Դու ծ ու ո Սրգոյի փ ո կ եր թ լ ց ես» (Յ-րդ, 48): «Փոկ» բառը մեզ համար անհասկանալի է, բանահաւաքը հարցականով «սերունդ» է դրել: Բայց որքան մենք գիտենք և պ. Հայկունին բացատրեց մեզ, պէտք է լինի «փոքրերուց». որովհետև Սասնու ջոջ տան հերոսները ժողովրդի մէջ կոչւում են սուրբ Սարգսի փոքրեր, կամ բարբառային ձևով՝ փուքրեր: Իսկ «ջորդ» բառը ճ ո Ր տ է, որ նշանակում է՝ արբանեակ, տղայ, սպասաւոր, փոքրաւոր, ծառայ: Այսպէս գործածւում է զոյգ՝ «ճորտ ու գերի» «կորտ ու ծառայ»:

Յովհաննէս Թլկուրանցին մի սիրոյ գովք անելուց յետոյ՝ իւր շնորհքի աղբիւրը գնելով «եօթն շնորհաց տէր մուրադատու սուրբ Կարապետին», որ ի միջի այլոց և աշղութեան շնորհք է տալիս, նրա պաշտպանութեան է դիմում այսպէս.

«Ասա զրանս, Յովհաննէս, Էր կուխնայիս.

Դու սուրբ Կարապետի ճորտ ու ծառան ես:

Սուրբ Կարապետ, շատ կուխնդրեմ զքեզ,

Զասողքս և զսողքս ի չարէն փրկես:

Ինչ իմաստով որ Թլկուրանցին իրեն անուանում է ս. Կարապետի ճորտ ու ծառայ, նոյն իմաստով պէտք է հասկանալ և մեր զիւցաղների՝ սուրբ Սարգսի «ճորտ ու փոքր» լինելը: Սուրբ Սարգիսը նրանց շնորհատուն է և հովանաւորը: Հետաքրքիր է, որ վէպի մէջ ս. Սարգիսն ևս նոյն ծ ու ո մականունն է կրում, ինչ որ Սասնու զիւցաղները, որ և ցոյց է տալիս թէ ս. Սարգիսն ու Ազնանց տոհմը մօտիկ յարաբերութիւն ունին կամ աւելի՝ ազգակցութիւն:

Վէպի մէջ իբրև գործող անձ է երևում ս. Սարգիսը: Երբ Դաւիթը Համադայ փահլեանի վրայ է գնում, «մէկ էլ տեսաւ յառջեւանց մէկ հմալ թող ուղղում ան կիգայ, որ Աստուած աղատայ. եկաւ, տեսաւ, որ սուրբ Սարգիսն է: Դաւիթ գնաց, որ Սարգսին համբուրէր, սուրբ Սարգիս ասեց.—հանէ քու սուրբ Նշանն ևս համբուրեմ, նոր դու ինձի համբուրէ:—Հանեց սուրբ Նշան, համբուրեց սուրբ Սարգիս. էն էլ սուրբ Սարգսին համբուրեց:—Դէ գնան, ասեց, Աստուած հետ քեզի եղնի՛ն (3-րդ, 46). Սուրբ Սարգսից յետոյ նոյն ձևով հանդիպում է Քեռի Թորոսիկը, որ յանդիմանում է Դաւթին և նրա ձին պահում:

Այս հատուածն այնպէս է պատմուած, որ սուրբ Սարգիսը Դաւթի հին ծանօթ մէկն է երևում. կարծես հաւասար նրան, և նոյն իսկ Դաւիթն իւր խաշով աւելի քան սուրբ Սարգիսը: Միւս կողմից տեսնում ենք, որ սուրբ Սարգիսն իւր փոքրերին կամ ճորտերին օգնութեան է հասնում նրանց ամենաղժուար կոտի մէջ, ինչպէս և Ձէնով Յովանը կամ Քեռի Թորոսը: Կարծում ենք, որ մի պատմուածքի մէջ (5-րդ, 520 հան.) յիշուած Ձէնով Սարգիսը, որ Ձէնով Յովանի եղբայրն է, Սասնու ծոերի նախնիների քեռին, նոյն է ինչ որ սուրբ Սարգիսը: Այս Ձէնով Սարգիսն ու Ձէնով Յովանը Դաւթի վէպի մէջ ևս հանդէս են գալիս և զոյգ կատարում են նոյն դերը, ինչ որ ուրիշ պատմուածքների մէջ Քեռի Թորոսն և Ձէնով Յովանը, կամ սուրբ Սարգիսն և Քեռի Թորոսը:

Սուրբ Սարգսի և մեր հերոսների մէջ եղած յարաբերութիւնն երևում է և վէպի վերջում: Անմահ Մհերն իւր փակուելուց առաջ յիշում է իւր նախնիներին և նրանց գերեզմաններին դիմում: Նա իւր հօրն ու մօր, Ձէնով Յովանի և Սասնու տան բոլոր մեռելների համար պատարագ է անել տալիս. բայց ամենից առաջ գնում է Բաղդաստ Բաղդասարի գերեզմանը տեսնելու. երկրպագում է գերեզմանին և վրան մի լաւապատում.—խորան ժամ՛ն է շինել տալիս, և անունը դնում սուրբ Սարգիս:

Ինչ կապ կայ սուրբ Սարգսի և Սասնու ծոերի, յատկապէս նրանց նախնի Սանասարի կամ Բաղդասարի մէջ. ինչ՞ու Մհերը իւր նախնիներին յիշելու ժամանակ յիշում է և ս. Սարգսին և իւր նախնու գերեզմանի վրայ կանգնած եկեղեցին նրա անունով է կոչում: Կարծում ենք, որ վերևում դրած հատուածներից բաւական որոշ երևում է, որ մի կողմից սուրբ Սարգիսը դարձել է Սասնու ծոերից մէկը, և յատկապէս Սանասարի կամ Բաղդասարի նախնին, երբեմն հաւասար Քեռի Թորոսին, Ձէնով Յովանին կամ Ձէնով Սարգսին, որոնք բոլոր միևնոյն անձի կրկնու-

թիւններ են. միւս կողմից մեր դիւցազնները նրա «նորտերն ու փոքրերն» են, իսկ սուրբ Սարգիսը նրանց հովանաւորը: Իսկ թէ ինչու անպատճառ սուրբ Սարգսի նորտ ու փոքրն են դարձած մեր հերոսները, և ոչ սուրբ Կարապետի, որը, յայտնի է, փահլաններին տալիս է ըմբշամարտութեան շնորհքը, և կամ սուրբ Սարգիսն է դարձած ծ ու ո Սարգիս և Ազնանց տոհմի նախնի,— այդ էլ կը պարզուի, եթէ ինկատի ունենանք սուրբ Սարգսի հեթանոսական պաշտամունքը և Սանասարի կամ Բաղդասարի դիւցազնական առասպելը:

Սանասարը կամ Բաղդասարը, տեսնաք, իրենց առասպելով հանդիսանում են իբրև ամպրոպային հերոսներ. իսկ սուրբ Սարգիսը, ինչպէս վերևում գրինք, փոխանակել է Հոգմի աստուածութեան: Այդ հին առասպելականութիւնների մէջ քամու աստուածութիւնները ամպրոպային աստուծու ընկերն ու արբանեակներն են նրա ամպրոպային կոռւի մէջ. և սուրբ Սարգիսն իսկապէս նոյն իւր այդ հին վէպի մէջ՝ դարձած լինելով ծ ու ո Սարգիս, որ թող ու դուժան հանելով օգնութեան է հասնում դիւցազններին: Եւ եթէ Սանու ծոներն այժմ սուրբ Սարգսի նորտ ու փոքրն են, այդ միայն նրա համար, որ սուրբ Սարգիսը պաշտելի է այժմ, մինչ Սանու ծոները, թէպէտ արդար մարդիկ, բայց պաշտելի չեն: Միւս կողմից՝ ինկատի պիտի ունենալ և մի ուրիշ հանգամանք. ինչպէս ընդհանրապէս Հոգմի աստուածութիւնները, սուրբ Սարգիսն ևս մեր արդի ժողովրդական հաւատալիքների մէջ իշխում է և փոթորկի ու ամպրոպի վրայ. նա ձմեռը հոգմ ու բուք է հանում, բայց ամառը հոգմ ու անձրև, և նոյն իսկ կարկուտ է բերում: Իբրև հին Քամու աստուածութեան փոխանորդ՝ նա մասամբ ուրիշն իւր վրայ է առած և փոթորկի ու ամպրոպի աստուածութեան դերը: Իբրև այսպիսին նա շատ ընականօրէն պիտի դառնար ամպրոպային դիւցազն Սանասարի կամ իւր եղբոր նախնի մի ծուռ, իսկ Ազնանց տոհմի հերոսները նրա նորտերն ու փոքրերը, իսկապէս, ինչպէս պիտի սպասէինք, սերունդը: Եւ եթէ ճիշտ լինի բանահաւաքի բացատրութիւնը «փոկ» բառի համար, որ մեզ կասկածելի է թւում, ըստ վէպի Սանու ծոներն ուրիշն ծուռ Սարգսի սերունդն են դառնում:

Սուրբ Սարգսի դերով, տեսնում ենք, ժողովուրդն իւր ամպրոպային դիւցազնների առասպելական ծովային ծագումն աշխատել է բացատրել քրիստոնէական ժամանակի հաւատալիքներով: Ամպրոպային հերոսները նոյն աստուծու ծնունդ են սովորաբար, իսկ մեր հերոսները նորտ ու փոքր են, եթէ ոչ սերունդ,

մի սրբի, որ իւր վրայ առել է ամպրոպային աստուծու կամ նրա արքանեակ Հոգմի աստուածութեան դերն ու առասպելը:

Հին հեթանոսականն ուրեմն դարձեալ քրիստոնէականի է վերածուած, բայց այդ քրիստոնէական իսկապէս անուանով է միայն քրիստոնէական, էութեամբ նոյն հին հեթանոսականն է:

Մարութայ բանօրիկ Աստուածածին:—Միւս սրբերից յիշուում է առանձնապէս Աստուածածինը, որ սակայն զործող անձ չէ: Նրա անուանով շինուած վանքը միայն մեծ դեր է կատարում վէպի մէջ: Այդ վանքի միջոցով վէպը մեր առաջ բաց է անում մեր ժողովրդի և իշխանների դարմանալի բարեպաշտութիւնը, յատկապէս նրանց եկեղեցասիրութիւնը:

Քրիստոնէական հաւատքի վրայ հաստատութիւնը երևում է հենց վէպի սկզբում: «Ուր որ լինիս, ինչտեղ դաս, լոյս հաւատիս հաստատ մնաս», ասած է մի ժողովրդական երգի մէջ թաթար խանին տուած աղջկայ համար: Նոյնը տեսնում ենք և մեր հերոսների նախամայր Մովսէս Խանումի նկատմամբ: Նա մարդու է գնում կռապաշտ թագաւորի, բայց իւր հետ թաքուն վերցնում է մի շքոսս վարդապետ» կամ տէրտէր, կնոջ հագուստով, որպէսզի օտար աշխարհում ժամ ասի և եթէ իրեն իրիտայ լինի՝ թոնրի վերայ կնքի (3-րդ, 62, 8-րդ, 4, 9-րդ, 404): Եւ այդ վարդապետը Մովսէսից անբաժան է մնում, միշտ նրա համար ծածուկ ժամ է ասում:

Նոյն վարդապետն իբրեւ խորհրդական մնում է և Սանասարի համար և նոյն իսկ երկու եղբօր հետ գալիս է Սասուն: Երբ նրանք իրենց բերդը շինում են, զարձան, ասում է վէպը, մէկ պղտի եկեղեցի մ' էլ շինեցին, և աւելացնում է. «վարդապետն էր, Սանասարն էր, Բաղդասարն էր. օրէն երեք դիր ժամ, խաչ, աղօթք կէներն» (3-րդ, 61—71, 74):

Նոյն ժամասիրութիւնը տեսնում ենք և Դաւթի համար: Սրա հիւղի մէջ առանձնապէս երևան է գալիս Մարութայ բարձր Աստուածածինը, որ կարծում ենք Սանասարի ու Բաղդասարի շինած փոքրիկ եկեղեցին է, որ և Դաւիթ նորոգում է. մի հարուստ վանք, ուր ոսկու և արծաթի հետ կան զօնազերդներ, անդին թագեր, անգին բուրձառներ, անգին խաչեր, անգին շուրջառներ, ոսկեկող աւետարաններ: Իսկ միաբանութիւնն է քառասուն եպիսկոպոս, քառասուն վարդապետ, քառասուն սարկաւազ և այլն, որոնց բոլորի ապրուստը ու վանքի բոլոր ծախքը տալիս է Դաւիթ, որ այնտեղ ուտեն, ժամ-պատարագ և Աստուծուց խնդրուածք անեն (2-րդ, 60, 3-րդ, 97 հտն.): Եւ վարդապետները՝ ոսկի գաւազան բռնած՝ քարոզ են տալիս ժողովրդին.

տէրտէրները՝ ոսկի սկիւն բռնած ձեռները՝ սրբութիւն են տալիս ժողովրդին. իսկ սարկաւազները՝ ոսկի բուրվառը ձեռներին՝ խուսկ են ծխում առջև ժողովրդին:

Ահա այս վանքի զօրութիւնն է, այս վանքի «հացն ու գինին», սրբութիւնը, սրա խաչ-պատարագը, որին միշտ ղիմում է Դաւիթը և որ այնքան մեծ ոյժ է տալիս Դաւթին: Սովորական կարճ աղօթքն է «հաց ու գինի, տէր կենդանի» (1-ն, 160, 174), կամ «Յիշեան իմ հացն ու գինին, Տէր կենդանին. Մարութայ բանձը Աստուարածին, Քաչ-պատարագին, վեր Դաւթի աջ թևին» (3-րդ, 109. 7-րդ, 23. 27. 2-րդ, 33, 36. 8-րդ, 36): Կընշանակէ «Համայնի» հաւատքին, որ տեսանք վերևում, փոխանակել է քրիստոնէական «հաց ու գինու», Մարութայ բարձրիկ Աստուածու միաբանների Քաչ-պատարագի զօրութեան հաւատքը: Պատմութեան մեծ մասի մէջ Համայնին արդէն մոռացութեան է տրուած քրիստոնէական Քաչ-պատարագի առաջ, որ միայն է յիշուում:

Սակայն Դաւիթը, ինչպէս տեսանք, իւր ծոցում կամ թևի վրայ իբրև Համայնի ունի և խաչ կամ սուրբ նշան: Եւ ինչո՞վ է Դաւիթ քրիստոնեայ, այս մասին նա պարզ պատասխանում է Քանդութին, երբ նա հարցնում է. «Ա՛յ Դաւիթ, քու նշան ի՞նչ կայ, որ աստուածապաշտ ես»:—«Իս էն իմ, ասաց, յիշան իմ խացն ու գինին, Տէր կենդանին, Մարութայ բանձը Աստուարածին, Քաչ-պատարագի՝ վեր իմ աջ թևին»: Քանդութն ուզում է տեսնել. Դաւիթը բաց է անում և ցոյց տալիս. «Որ շանք ետու՝ Մսէ խաչ էնու թևու վրայ էր» (3-րդ, 123 հտն.):